№ 11 ՆՈՅԵՄԲԵՐ 1883

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Արմենակն ու Գարեգինը .... Վ. Ռ.
Գուլթան (բանաստեղծութիւն) .... Սրինգ
Երկու կղզի (Ալֆոնս Էսկիրոսից) Փոխադր. Օր. Միհրուհի
Խեղճ մարդ, օրեդ նալլա՛թ (բանաստեղծութիւն) .... Ս. Քամալեանց
Փայտաշէն խրճիթից՝ սպիտակ տունը (շարունակութիւն գլ. XVI, XVII, XVIII և XIX)
Թռչուններն ուր են գնում ձմեռը Փոխադր. .... Լ. Մ—Ա.
Զարաճճի Պեպիի արարմունքը . . Ն. Նեմէլով

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լուսանկարչութիւնը կենդանի մարդու վրայ.
Ճանճերի լեզուն.
Ջրի և ցամաքի վրայ շարժուող կառք.
Ամենամեծ գետերը։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Եղբայրական սէր

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

Հինգ մատները .... Սարգիս Փիլոյեանց
Հանելուկներ (6 հատ)
Շուտասելուկ
Վանեցոց երգը։
Նախընթաց №-ի մէջ եղած հանելուկների բացատրութիւնը։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՂԲԻՒՐ

ՄԻԱՄՍԵԱՅ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵԽԱՆԵՐԻ

ԵՒ

ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

№ 11

ՆՈՅԵՄԲԵՐ

ԹԻՖԼԻՍ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑԻ ՏՊԱՐԱՆ
ՕՐԲԷԼԵԱՆ ՓՈՂՈՑ, 5
1883

ԱՐՄԵՆԱԿՆ

ՈՒ

ԳԱՐԵԳԻՆԸ

Տարուայ ամենագեղեցիկ եղանակը՝ գարունը, նոր էր վերջացել։ Աշակերտներին արդէն ամարային արձակուրդը տուել էին։ Մայր-Արաքսի մօտի գիւղերից մէկում մի գեղեցիկ, պայծառ առաւօտ Գարեգինը նստած իրանց դռան առաջ, որ գիւղի ծայրին էր շինուած, սրբում էր զինուորից նոր գնած հրացանը։ Նրա կողքին նստած էր Արմենակը և ամենայն հետաքրքրութիւնով նայում էր մեծ եղբօրը։ Գիւղի մօտերքում խոզեր արածացնող տղերանցից մինը մօտեցաւ երկու եղբայրներին և սովորական կերպով բարովեց.

—Բարի աջողում, Գարեգին։

—Աստուծոյ բարին, Աշոտ ջան. ի՞նչ կայ, ի՞նչ չկայ։

—Գարեգին ջան, այս երեք օր է, այն բարձր քերծի վրայ մի եղջերու է ման գալիս. արի, կը լինի, գնանք որսանք։

Գարեգինը լսելուն պէս իսկոյն ծոցից հանեց թըղթում փաթթաթած վառօդը և մի գնդակ՝ լցրեց հրացանն ու երեքը միասին ուղևորուեցին դէպի ցոյց տուած տեղը։

—Արա, Արմէն ջան, ճանապարհին դարձաւ եղբօրը Գարեգինը, քո բախտի վրայ պէտք է արձակեմ հրացանը, թէ լաւ բախտ ունեցար, այսօր եղջերուի-թթուաշ խորովածով մի լաւ կը կշտանանք։

Արմէնակը թէև լսեց եղբօր խօսքերը, բայց չէր կարողանում հասկանալ, թէ ինչպէս պէտք է հրացանը արձակուի, որ Գարեգինը կարողանայ եղջերուին սպանել և իրանք էլ նրա խորովածով կշտանան, որովհետև նա դեռ չը գիտէր, թէ հրացանի մէջ ինչ կայ ածած։

Երբ մօտեցան ցոյց տուած քերձին, խոզարած տղան և Արմենակը մի մեծ քարի յետև կուչ եկան, որ Գարեգինին լաւ գիտեն և թէ որսը չը փախցնեն։ Իսկ Գարեգինը հրացանը ձեռին կուզկուզ կամաց-կամաց սկսեց առաջ գնալ դէպի մի ինչ որ երևացող բան. երբ այնչափ մօտեցաւ՝ որտեղից հեշտութիւնով գնդակը տեղ կը հասնէր, մեր քաջ Գարեգինը հրացանը նշանակի բռնելն ու մէկ ակնթարթում եղջերուի գետին փռելը մին արաւ։ Իսկոյն դանակը հանեց ու այնպէս հպարտ և ուրախ դէմքով վազեց որսի գլխին կանգնեց, որ կարծես թէ քիւրդ աւազակների գլխաւորին լինէր սպանած, կամ հէնց գիտենաս, Գարեգինը դրանով ուզում էր իր մեծ մարդկութիւնը ցոյց տալ խոզարածին ու Արմենակին, որը հրացանի թնդիւնից վախեցած դողում էր կուչ եկած տեղը։ Գարեգինը երբ կանչեց նրանց իր մօտ, Արմենակը օրօրուելով, քայլերը ծռմռելով և գունաթափ մօտեցաւ նրան, որ նկատելով այդ, հարցրեց.

—Այդ ինչո՞ւ ես այդպէս դարձել, Արմէն ջան։

—Հրացանի ձայնից շատ վախեցայ, հազիւ լսելի ձայնով պատասխանեց Արմենակը, որի վրայ Գարեգինը սկսեց ծիծաղել և անարգ անելով ասել.

—Ի՞նչ կտրիճ մարդ կը դուրս գաս է, մեր տղայ։ Ապա երբ բարով մեծանաս և մեր գիւղի հասարակութիւնը գիւղական պահապանների հետ քեզ էլ ուղարկէ քիւրդ աւազակների վրայ, որոնք մեր հայ գիւղացիներից ոչխար ու տաւար են խլում, և շատ անգամ էլ մեր սուրբ վանքերի ունեցած չունեցածը կողոպտում, ի՞նչ պէտք է անես այն ժամանակ։ Ի՞նչպէս պիտի համբերէ սիրտդ, մի՞թէ սուրդ չես խրիլ այն աւազակապետի փորը, որ հրամայում է իր ընկերներին Հային վախկոտ անուանել և զրկել նրանցից այն գեղեցիկ գառները, որոնց դու այնչափ սիրում ես և հետները խաղում, կամ թէ չէ՝ սովորեցնում է, որ յարձակուին դաշտում խաղաղ գութան վարող հայ ռանչպարի վրայ և լծից նրա աչքի լոյսի պէս սիրած եզները քաշեն տանեն. այն եզները, որոնցով նա վարուցանք անելով իր ընտանիքն է պահում, իսկ առանց այդ եզների նրա երեխայքը քաղցած կը մնան։ Մի՞թէ երբ այդպէս բաներ տեսնես, փոխանակ քո հայ եղբայրներին օգնելու՝ կը վախենաս։ Եթէ վախենաս, դու շատ վատ մարդ կը լինես, որովհետև վախենալու պէս վատ և ամօթ բան չը կայ, մարդ պէտք է քաջ լինի, նրա համար որ քաջ լինելն ամեն բանից լաւ է։

Գարեգինի խօսքերը, կարծես, Արմենակի սրտին դիպան՝ նրա ինքնասիրութիւնը վիրաւորեցին, այդ պատճառով մի առանձին ոգևորութիւնով ասաց.

—Ես ամենևին չեմ վախենալ, ինչու եմ վախենում, որ ամօթ լինի, ես հրացան արձակել կը սովորեմ։ Եթէ հրացանդ ինձ պահ կը տաս, ես միշտ փորձեր կանեմ գայլերի վրայ, և կը սպանեմ անպատճառ այն արջին, որ ամեն տարի մեր սիմինդրի արտերը փչացնում է. իսկ

երբ աւազակների վրայ ուղարկեն՝ նրանց էլ կը սպանեմ, որ էլ չը կարողանան վնասել մեր գիւղին, մեր սուրբ վանքերին և մեր Հայ եղբայրներին։ Բայց, ասա՛, Գարեգին ջան, այն ի՞նչ ծուխ ու կրակ էր, որ Հրացանի բերանից դուրս եկաւ արձակելիս։

—Սոված եմ, Հաց ուտենք պրծնենք, յետոյ կասեմ։

Արմենակն ու Աշոտը սկսեցին խշուր-մշուր՝ չոր փայտի կտորտանք, Հաւաքել և կրակ անել. իսկ Գարեգինը որսը մաշկեց, խորովածացուն կտրտեց, տաշեց, վերկացու ծառի ճիւղերից շամփուրներ շինեց, բերեց շամբուր արաւ, գնաց կրակը դըստեց, կողքերին շամփրաքարեր դրեց, շամփուրները վրան շարեց և յանձնելով Աշոտին՝ որ շուտ-շուտ շուրտու-շուրտու անի, ինքը մի քանի մեծ-մեծ տերևներ պոկեց սուփրի տեղ փռեց, Աշոտի մախաղի Հացը կտրտեց ու ձայն տուեց.

—Դէ բե՛ր, Հերիք է, ինչ խորովեց, քանի քիչ լինի խորոված՝ այնքան Համով կը լինի։

Երբ Աշոտը բերեց խորովածը, Գարեգինը վէրառաւ և երեքն էլ, ծալապատիկ նստոտելով կանաչ խոտի վրայ՝ սկսեցին այնպէս ախորժակով ուտել, որ եթէ մի ախորժակը կապ մարդ տեսնէր, նրա ախորժակն էլ կը բացուէր։

Հացը ուտելուց յետոյ Գարեգինը ծոցից Հանեց թղթի մէջ փաթաթած վառօդը և ցոյց տալով Արմենակին ասաց.

—Ահա՛, Արմեն ջան, սրանից էր տեսած ծուխն ու կրակը, որ դուրս եկաւ Հրացանից՝ այնպէս սաստիկ թնդիւնով։

—Դա ի՞նչ բան է, որ այդպիսի զօրութիւն ունի, Հարցրեց Արմենակը։

—Ա՛յ ասեմ։ Սա շինվում է երեք տեսակ բանից, այն է՝ ածուխից, ծծմբից և բորակից։ Ամենից առաջ ուռիի բարակ ճիւղերից ածուխ պէտք է շինել ու այն-

քան բարակ ծեծել, որ շարմաղ ալիւրից էլ կերմակ լինի. յետոյ լաւ խստակ ծծումբը նոյն տեսակ բարակ պէտք է ծեծել այնքան, որ ամենափոքր հատիկն անգամ չերևայ, և վերջը լաւ մաքուր բորակն էլ ածուխի ու ծծմբի նման բարակ փոշիացնելով՝ այդ երեքը խառնել իրար հետ։ Այնպէս որ այդ խառնուածքի 100 մասից $13^1/_2$ մասը ածուխ լինի, $9^1/_2$ մասը ծծումբ և $76^1/_2$ մասը բորակ, և տրորելով այնքան պէտք է խառնած, որ լաւ խառնուին իրար. յետոյ այդ խառնուրդն ածել սանդի մէջ, վրան էլ մի քիչ ջուր աւելացնել, այսինքն եթէ 100 գրւանքայ է, միայն կէս գրւանքայ ջուր, և հարել փայտով այնչափ, որ դառնայ մի անբաժան խմոր։ Երբ այս գործողութիւնները վերջանայ, պէտք է տախտակ դնել կամ թուղթ փռել և վրան ծակծկած թիթեղ կամ մաղ բռնել ու այդ շինած զանգուածից քիչ-քիչ հանել և կամաց-կամաց վրան քսել, անդադար մաղը կամ թիթեղը տեղափոխելով, որպէս զի ծակերից տախտակի կամ թղթի վրայ թափուող մանր հատիկները իրար չը կպչեն։ Այնուհետև այդպէս փռած դրութիւնով դնել բակում մի շուաք տեղ արեգակ ժամանակ. չը մոռանալ որ տեղը պէտքէ չոր լինի և կրակից ու ծխից էլ հեռու։ Երբ չորանում պրծնում է՝ դառնում է այս, այսինքն պատրաստի վառօդ։ Սրանից երբ կամենում են մեծ քանակութիւնով պատրաստել, գործարաններում են շինում, ուր շատ մաքուր և գեղեցիկ է պատրաստվում։ Վառօդի պատմութիւնը շատ երկար է. թէ ով հնարեց առաջ, ինչպիսի բաներ են շինում վառօդից և ինչ բաների համար գործածում, տանը կը պատմեմ այդ բոլորի մասին, ինչ որ ինքս գիտեմ։ Իսկ այժմ շտապենք տուն, որովհետև տանը չը յայտնեցինք թէ ուր ենք գնում, նրանք կարող են անհանգիստ լինել մեզ համար. և նրանց էլ թարմ որսի միս ուտեցնենք։

Եւ յետոյ Գարեգինը ոսկից Աշոտի բաժինը տուեց իրան ու երկու եղբայրը միասին դարձան տուն։

Միւս օրն առաւօտեան Արմենակն ու Գարեգինը նստելով ծառի տակ, վերջինս նախընթաց օրուայ պատմութիւնն այսպէս շարունակեց.

—Մեզանից շատ հեռու արեւելքում մի երկիր կայ Չինաստան անունով։ Նրա բնակիչներն աշխարհիս ամենահին ազգերից մինն են։ Նրանց մէջ առաջ շատ լաւ-լաւ բաներ են եղել, գիտութիւնը և լուսաւորութիւնը ծաղկած դրութեան մէջ է եղած նրանց երկրում. այդ պատճառով շատ գիտնական մարդիկ հաւատացնում են, իբր թէ նրանք են հնարել վառօդը Քրիստոսի ծննդից շատ ու շատ տարի առաջ։ Բայց շատերն էլ ասում են 14-րդ դարում, այսինքն 1400 թուականին, Բարդոլդ Շվարց անունով մի գերմանացի քիմիկոս; երբ մի օր ածուխը, ծծումբն ու բորակը կրակի մօտ խառնելիս է լինում, յանկարծ բռընկում է, և նա այդ տեսնելով ըսկսում է փորձեր անել ու վերջիվերջոյ վառօդ է շինում։ Երբ վառօդ է լինում, այնուհետև աշխատում են և դրան յարմար հրացաններ շինել ու տարէ ցտարի կատարելագործել։ Այս տարուայ հրացաններն ու թնդանօթները վերջիս անգամուայ կատարելագործուածն են։

—Այդ բոլորը մէկ մարդ է հնարել, Գարեգին։

—Ո՛չ, հոգիս, հրացանը մինը հնարեց, թնդանօթը մի ուրիշ մարդ։

—Ի՞նչ բան է թնդանօթը, դարձեալ հարցրեց Արմենակը։

—Թնդանօթը հրացանի նման մի ահագին մեծութիւնով պղնձէ բան է և իրան համեմատ էլ գնդակ ունի, որ ռումբ է կոչվում։ Երբ տէրութիւնները կամենում են իրանց թշնամի տէրութիւնների զօրութիւնը խորտակել՝ թնդանօթը լցնում են վառօդով և ռումբ դցում մէ-

ջը ու քանդում այն բերդի ահագին պատերը, որոնց ետև թաքնուած է լինում թշնամին: Վառօդով են քանդում այն մեծ ապառաժ քարերը, որոնք պատահում են երկաթուղիների, ջրանցքների և խճուղիների համար շինուելիք ճանապարհի վրայ: Վառօդով են ջնջում վնասակար գազաններին: Մէկ խօսքով, ինչպէս որ հացը հարկաւոր է մարդուս ապրելու համար, այնպէս էլ վառօդն է հարկաւոր մեր կեանքի ապահովութեան համար: Թէպէտ պատահում են և վնասներ էլ. օրինակ՝ վառօդի պահեստները բռնկելով՝ ոչնչացնում են մի ամբողջ բերդ կամ քաղաք իր բնակիչներով. միայն այս բաները պատահում են անզգուշութիւնից, օրինակ՝ վառօդի պահեստներին կրակ մօտեցնելուց, կամ մեզանից անկախ պատճառից; այն է՝ պահեստին երբ կայծակ է խփում: Բայց այս վերջին տեսակ վտանգի առաջն առնելու համար այժմ պահեստների մօտ շինում են շանթարգելներ, որոնք կայծակ ունեցող ամպերի զօրութիւնը ոչնչացնում են և պահեստներն էլ անվտանգ են մնում: Սրանից պարզ երևում է, որ եթէ մենք զգոյշ լինինք, վառօդից ամենևին վնաս չենք ստանայ, այլ միշտ էլ օգուտ կ՚ստանանք: Բացի վառօդից կան էլի ուրիշ դիւրավառ բաներ, որոնց վառուած միջոցին մարդ որ տեսնում է՝ հիանում է, այնքան գեղեցիկ գոյներ են ստանում, ինչպէս օրինակ կանաչ, կարմիր, կապոյտ, սպիտակ, նարնջի և այլն. երբեմն էլ, երբ այդ բոլոր գոյները խառնվում են իրար հետ, աւելի սքանչելի է լինում: Ես այս բաներն իմ ընկերոջիցն եմ սովորել:

—Դէ դու էլ ինձ սովորեցրու, Գարեգին ջան:

—Շատ լաւ, սիրելիս, միայն հիմա չէ, այլ մի ուրիշ անգամ կը պատմեմ, եթէ միայն կաշխատես այսօրուան դասերս մտքումդ պահել. թէ ո՛չ, չեմ պատմիլ:

Վ. Ռ.

ԳՈՒԹԱՆ

Ամացոյ, եկաւ գունաթափ աշուն,
Մերկացան դաշտեր կանաչ գորգերից,
Եւ անտառների դեղնած տերևներ
Զրկուել են իրանց հարազատ մօրից . . .

Ցաւում է աշխարհ, տնքում են ծառեր,
Սակայն դիմացի՛ր, իմ հզօր Թիկունք.
Տանս անկիւնում սրածայր իմ խոփ
Ժանգոտուել է, ո՜հ, և խփել աչկունք։

Դէ՛հ, շուտ շարժուի՛ր իմ ձեռում խարտոց.
Լուա՛ խոփի դէմք, բա՛ց քնած աչեր,
Որ նա արթնանայ և պատրաստ լինի
Անվախ վարելու արգաւանդ արտեր։

Եւ դեռ չծագած ուժաթափ արև՝
Հասնեմ մերկ դաշտը, եզներս լծեմ.
Գութանի խոփը թո՛ղ հողը պատռի,
Որմի արմատ շաղ տայ դէս ու դէն։

Եւ ես յենուած իմ եզանց լծին,
Անոյշ պաչելով նրանց աչերին,
Երգեմ այս երգը, երգը ռամիկի,
Խրախոյս տալով տնքող եզներին.

« Վարի՛ գութան, դէ՛ վարի,
Կոշտ գետինը դու փորի,
Եւ սուր խոփդ անտրտունջ
Բլրակները թո՛ղ ճղի։

Վարի՛, գութան, համարձակ,
Ներքին շերտը շո՛ւռ ածա,
Մ՚ի ծուլանար ընաւին,
Գործից խոփդ սպղայ։

Իսկ դուք եզներ, քաշեցէք
Հողում թաղուած գութանին,
Որ նա կտրի արմատը
Վնասակար փշերին։

Եզնե՜ր, եզնե՜ր, ձեզ մատաղ,
Տարէք լուծը գութանի·
Մ՚ի վախենաք—ամառը
Կառնէք վարձը ձեր ուսի։

Անգին գութան, սո՛ւր գութան,
Հարթէ՛ր դաշտեր դու խոպան,
Քեզնով ապրի—շունչ առնի
Ամեն անդամ մարդկութեան . . . »

ՍՐԻՆԳ

ԵՐԿՈՒ ԿՂԶԻ

(Ալֆօնս Էսկիրոսից)

եղանից շատ առաջ մի ծովի վրայ, որի անունը լաւ չեմ մտաբերում, կար մի կղզի. Հարուստները կառուցել էին այդտեղ շքեղ մարմարենեայ պալատներ և շրջապատել նրանց այգիներով ու լճակներով։ Հազուագիւտ ծառեր և թփեր տնկած էին ամեն տեղ։ Հարուստները հպարտ-հպարտ ման էին գալիս փողոցներով պըսպղուն կառքերում նստած, առաջները քսան ձիաւոր գցած։ Մինչև արշալոյսի ծագելը նրանք անց էին կացնում ժամանակը խնճոյքներով, զբօսանքով. իսկ ցերեկը մինչև կէսօրը պառկած էին իրանց փափուկ տեղաշորերի մէջ։ Նրանց պալատներում ամեն ինչ փայփլում էր, հուրհրատում։ Մի խօսքով նրանց սենեակները լիքն էին ոսկով և արծաթով։

Այդ հարուստների պալատներից շատ հեռու գտընվում էին խարխուլ և կիսաքանդ խրճիթներ։ Դրանց տէրերը կղզու աղքատներն էին։ Քամին ազատ մտնում էր նրանց սենեակները, իսկ անձրևների ժամանակ, ջուրը այնքան էր ծլծլում քանդուած տանիքից, որ խրճըթում էլ ցամաք տեղ չէր մնում։

Կղզու մի կողմում միշտ կուշտ փորով, անհոգ բընակվում էին հարուստները։ Դրանց սեղանից անպակաս

էին հազուագիւտ թռչունները և ձկները։ Գինին և մեղրը ակերով լիքն էր լինում. իսկ կղզու միւս կողմում աղքատները ցամաք հաց էլ շատ անգամ չէին ունենում ուտելու, ուր մնաց միս... Երեխաները մեռնում էին քաղցածութիւնից. միայն ջուրն առատ էր, բայց դա էլ քաղցը չէր կտրում։

Մի կողմում հարուստները հագել էին թանգագին շորեր, ոսկէ գօտիներ էին կապել և հազարաւոր մատանիներով զարդարել իրանց մատները։ Տիկինները և աղջիկներն իրանց մազերը զարդարել էին մարգարիտներով, ականջներից օղեր կախ արել, կրծքից գոհարեայ խաչեր, ձեռքերի վրայ ապարանջաններ. իսկ միւս կողմում աղքատները հագուստ չունէին, ցնցոտիներով էին ծածկել իրանց մարմինը։ Մայրը մի փալասի կտոր, չունէր որ փաթաթէր իր նորածին մանկան։

Հարուստներն իշխող լինելով ստիպում էին աղքատներին ծառայել իրանց։ Դրանք անտրտունջ կատարում էին իրանց աղաների պատուէրները։ Նրանք սրբում, մաքրում էին փողոցները, դուրս էին տանում աղբը շալակով, փորում էին լճերը և պալատներ կառուցանում։ Նրանք էին արտերը վարում ու ցանում, գործուածներ պատրաստում, ի հարկէ, բոլորը, բոլորը անիրաւ հարուստների համար։ Բայց ցաւն այն է, որ հարուստներն ատում էին նրանց, զզւում էին նրանցից։ Մինչև անգամ նրանց թոյլ չէին տալիս անցնել փողոցով, որ իրանց կեղտոտ ցնցոտիներով և գարշելի շնչառութիւնով չը թունաւորեն օդը։ Նեղութեանը չափ կար։

Մի օր աղքատները հեռացան մօտակայ սարը և սկսեցին խորհրդակցել հարուստների լծից ազատուելու մասին։ Ջահիլներն առաջարկում էին զէնք վերցնել, յարձակուել քնած ժամանակ իրանց տանջողների վրայ և ամենքին կոտորել, ամենը նրանցից խլել և միմեանց

մէջ բաժանել։ Բայց այդ ժամանակ բարձրացաւ մի իմաստուն ծերունի և, երբ ամենքը լռեցին, սկսեց այսպէս խօսել.

—Այդ մի՛ անէք, ասում էր նա. դուք դրանով ձեր ցաւին դարման չէք անիլ։ Հարուստների պալատները պաշտպանւում են ծառաներով և կատաղի շներով։ Ի՞նչ կարող էք անել նրանց դէմ... Կարող է պատահել, որ այսօր դուք կը խլէք, կը յաղթէք, որովհետև զօրեղ էք, վաղը ձեզանից զօրեղները կերևան, ձեզ կը յաղթեն, ձեզանից կը խլեն ամեն ինչ . . .

Նա մի փոքր լռեց, նայեց իր շուրջը յուսահատուած ընկերների վրայ և շարունակեց.

—Բայց ես ձեզ մի ուրիշ խորհուրդ կը տամ։ Քանի անգամ լսել էք ձեր ընկերներից—խեղճ նաւաստիներից, որոնք ձեզ պէս ծառայում էին հարուստներին, բերում էին նրանց համար թանգագին շորեր, գործեր և անօթներ։ Դուք լսել էք նրանցից, որ մեր ծովի վրայ կան ուրիշ դեռ ևս չը բնակուած կղզիներ։ Եկէք, գնդենք նրանցից մէկի վրայ, անվհատ աշխատենք։ Մեր մէջ կայ ազնիւ հոգի, ունենք արդար ձեռներ։ Գնա՛նք, ես ինքս իմ ծերութեան հասակում առաջինը կը վերցնեմ բահը և կաշխատեմ։

Ծերունին վերջացրեց. ամենքը համաձայնուեցան։

Մի քանի օրից յետոյ նաւեր պատրաստեցին տախտակներից, որոնցով ծածկած էին նրանց խրճիթները, վերցրին միայն իրանց գործիքները—էլ ուրիշ ոչինչ չունէին հետները տանելու։ Հարուստներն ուրախ էին նրանց հեռանալովը։

—Վերջապէս ազատուեցանք այդ ռամիկներից, յաճախ ասում էին նրանք։

Մի քանի ժամանակ համբաւ չը կար հեռացած աղքատներից. նրանք, կարծես, կորան։

—Այդ զզուելիները երևի սպանել են միմեանց, ասում էին հարուստները։

Հազիւ հայ աղքատները քայքայուած նաւերով հասան մի անընակ կղզու: Նոր յոյսերով, նոր ոյժերով դուրս եկան ափը, շտապով շինեցին իրանց համար խըրճիթներ: Ամբողջ կղզին բաժանեցին միմեանց մէջ և սկսեցին վարուցանք անել: Մի քանի տարի շարունակ այդ տեղ աշխատեցին: Այդ վաստակաւորները գործարաններ շինեցին, գիւղեր, քաղաքներ հաստատեցին, իրար հետ հեշտ հաղորդակցութեան համար ճանապարհներ, ջրանցքներ անցկացրին: Առաջուայ անպտուղ կղզին կերպարանափոխուեց: Այժմ գեղեցիկ այգիները տարածուել էին նրա վրայ, ամեն տեղ երևում էր կեանք: Ամեն տեղ թագաւորում էր հաշտութիւն և համաձայնութիւն: Եղբայրները միմեանց հետ սիրով էին, որդիքը հնազանդ ծնողներին: Փոքրերը մանկութիւնից սկսեցին աշխատել... Մի խօսքով ամենքն էլ բախտաւոր էին և ուրախ...

Հարստացած աղքատներն սկսեցին նաւերով ծովեր անցնել: Մի այսպիսի նաւ եկաւ իրանց առաջուայ կըղզին: Նա լիքն էր հացով և գործուածներով. նաւաստիների լեզուից, դէմքերի գծագրութիւնից իսկոյն նրանց ճանաչեցին. սկսեցին հարց ու փորձ անել, և երբ նրանք բոլորը պատմեցին, հարուստները միայն ծիծաղում էին և ծաղրում նրանց: Նրանք առասպել էին կարծում իրանց լսածը:

Պէտք է ասած, որ հարուստների գործերը վերջում բոլորովին ձախ գնացին: Երբ աղքատները հեռացան, էլ նրանց մօտ ոչ ոք չը մնաց, որ վարուցանք անէր, գործուածներ պատրաստէր հանդերձների համար: Հարուստները սաստիկ ծոյլ էին, ոչ մի գործ չը գիտէին և չէին էլ ուզում գիտենալ: Նրանց պալատներն սկսեցին քանդուել. առաջուայ գեղեցիկ այգիները վայրենի խոտերով լցուեցին, իսկ նորոգող, մաքրող չը կար: Սկզբում նրանք դիմեցին դրացի կղզու արհեստաւորներին, բայց նրան-

ցից ոչ մէկը չէր համաձայնվում գալ. ամենքը լաւ էին ճանաչում այդ հարուստներին: Առաջ քանի փող կար, հարուստներն առնում էին այլազգի վաճառականներից հարկաւոր պիտոյքները, բայց երբ ոսկի-արծաթն էլ հատաւ, նրանցից էլ ոչ ոք ոչինչ չէր տալիս հարուստներին: Այդ օրուանից հարուստներն սկսեցին նեղութիւններ կրել: Նրանք շատ էին զղջում, որ վատ վարուեցին աղքատների հետ, բայց արդէն ուշ էր, բանը բանից անց էր կացել . . .

Անցնում էր օրը օրի ետեւից. մի նեղութեան վրայ միւսն էր աւելանում: Ծառաները հրաժարուեցան ծառայելուց, որովհետեւ ռոճիկ չէին ստանում: Ձիաները և միւս աշխատող անասունները պահապան չունէին, նրանք ազատ ման էին գալիս այգիներում և արտերում, կարծես, անտէր լինէին: Փողոցները լցուեց աղբով: Տըղամարդիկ և կանայք անցնում էին մի կողմից միւսը. դրանք քրքրում պտրտում էին աղբը ուտելու բան գտնելու: Նրանց հագին առաջուայ շորերն էին բայց պատըռտուած և մաշուած: Կինարմատներն սովորում էին կարկատել իրանց շորերը:

Մի խօսքով հարուստների կղզին դարձաւ աղքատների երկիր: Ամենքը սովից կը մեռնէին, եթէ օգնութեան չը գային նրանց կղզու հին բնակիչները—հեռացած աղքատները, և չը տային այն, ինչ որ իրանց համար աւելորդ էր:

Հարուստներն սկսեցին փոքր առ փոքր հեռանալ այդ կղզուց, ցրուել մերձակայ կղզիների վրայ: Նրանց հին փառքից և շքեղութիւնից մնացին միայն պալատների փլատակները և փչացած այգիներն իրանց վայրենացած ծառերով: . . .

Փոխ. Օր. ՄԻՀՐՈՒՀԻ

ԽԵ՛ՂՃ ՄԱՐԴ, ՕՐԻԴ ՆԱԼԼԱ՛Թ

Դու, խեղճ գիւղացի, անօգնական մարդ,
Ծերունի լինիս, թէ երիտասարդ
Ոչ մի աշխարհում չունիս պատիւ, յարգ.
Էն գլխից հարստին եղել ես մշակ.
Որը վաստակիդ կատարեալ տէր է.
Դու սոսկ կմաղք ես, հարուստ միշտ գէր է.
Ուստի անունդ է տնանկ ու աղքատ,
Անճար ու խեղճ մարդ, քու օրին նալլա՛թ։

Դու վարի, ցանի, հարուստն ուտի.
Ցանածդ ցաքիր փորով անօթի.
Բայց հնձի, կասի, թեղ տուր, խտակէ,
Հարուստը կը գայ կալդ դարդակի.
Նա զինի խմի, դու դառը քրտինք,
Նա քո հացն ուտի, դու սև նախատինք.
Ուստի մնում ես տկլոր ու աղքատ,
Վա՛յ խեղճ գիւղացի, քու օրին նալլա՛թ։

Հարուստներ, բէգեր, իշխաններ, ազնիւ
Դրել են վզիդ ցաւեր բազմաթիւ.
Զտեսայ երբէք, որ մի ժամանակ
Ունենայիր դու հանգիստ, անկախ կեանք։
Գուցէ քեզ քաղցր է այդ լուծ դժնդակ,
Որ միշտ մնում ես հարստին մշակ.
Ուստի թողնում է նա քեզ միշտ աղքատ,
Վա՛յ խեղճ գիւղացի, քու օրին նալլա՛թ։

Եթէ ուզում ես դուրս գալ այդ լծից.
Պրծնիլ, ազատուիլ ստրուկ անունից՝
Ղրկէ՛ր որդիքդ դպրոց, վարժարան—
Ուսնեն բանալին, քո շղթան բանան։
Այդ զէնքից միայն կը սոսկայ հարուստ,
Եւ դու յետ կառնես քո անդարձ կորուստ,
Ոչ ոք սիրտ չ՚անիլ քեզ ասիլ «աղքատ».
Ոչ էլ ես կասեմ «քու օրին նալլա՛թ»։

Ս. ՔԱՄԱԼԵԱՆՑ

ՓԱՅՏԱՇԷՆ ԽՐՃԹԻՑ՝

ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆԸ

(Շարունակութիւն)

XVI

Ջէմս Հարֆիլդը ձեռի տակ ունենալով լաւ կազմակերպած գիտնական գրատուն և լեզուին էլ շատ լաւ տիրապետելով՝ նրան մնում էր միայն գործն սկսել ինչպէս հարկն է։ Այդպէս էլ արաւ։ Դեռ մի ամիս չէր անցել, ուսուցիչներն ու ուսանողները հիացման մէջ էին, լսելով երիտասարդ բեմբասացի փորձնական դասը։ Նա կատարելապէս գրաւեց ամբողջ լսարանը և ընդհանուր զմայլումն պատճառեց ունկնդիրներին։ Զարմանալի էլ չէ, որ վերջերում Հարֆիլդը ճարտարախօսի մեծ փառք ձեռք բերաւ Ամերիկայի մէջ՝ իբրև գեղեցկախօս և սրամիտ պաշտպան իրաւաբանական մասում։

Ամարային երկու ամսուայ արձակուրդը միջոց տուեց Ջէմս Հարֆիլդին եռանդով պարապելու ձեռքի աշխատանքով։ Հարևանները բաւականին շատ գործ ունէին, այնպէս որ, երկու ամսուայ ազատ ժամանակամիջոցում խոտ վէրծալուց և հնձից նա լաւ աշխատանք ունեցաւ։

Ջէմսի դպրանոց վերադառնալու օրը մօտենում էր։

—Ցաւում եմ, որ ճանապարհիդ համար փող չունիմ քեզ տալու, Ջէմս, ասաց տիկին Հարֆիլդը իրանց անջատուելուց մի օր առաջ։

—Փողն ի՞նչիս է պէտք, ընդդիմաբանեց նրան Ջէմսը. գրպանիս մէջ ամբողջ ի ն ն ը պ է ն ս ունիմ— և ծիծաղելով հանեց դրամը—այս ինձ բաւական ժամանակ հերիք է, հէնց որ Չեստէր հասնեմ, Վուդփորթի մօտ ինձ համար արդէն պատրաստի գործ կը լինի։ Էլ ի՞նչ պէտք է։

Այսպէս՝ պատանի Հարֆիլդը վերադարձաւ Չեստէրեան դպրանոց՝ միայն այդ ի ն ն ը պ է ն ս ա ն ո ց դրամն ունենալով գրպանում։

—Այս խեղճ որբուկի Համար տխուր կը լինի մենակ պառկելը գրպանիս մէջ, ճանապարհին կատակով ասում էր Ջէմսը Դարրի Բօյտօնին՝—որքան կարելի է, շուտ պէտք է սրա Համար ընկեր գտած։

Կիրակի օրուայ առաւօտ էր, որ մեր ուսանողները Հասան դպրանոց, ուստի՝ ուղղակի գնացին պատարագին ներկայ գտնուելու, որի վերջում սկսեցին գանձանակ պտտեցնել։ Ջէմսը, առանց երկար մտածելու, իր «որբուկին» նրա մէջ ձգեց, աւետարանի մէջ յիշուած այն որբեւայրիի նման, որ իր ունեցած վերջին լուման Աստուծուն նուիրեց։

Կարճ ժամանակից յետոյ դպրանոցում մի անցք պատահեց, որով Ջէմսը ցոյց տուեց իր վերին աստիճանի Հաստատամտութիւնը։

Այդ անցքը Հետեւեալն էր. ուսանողներից մինը՝ որ մի անամօթի մէկն էր՝ խօսքով վիրաւորել էր քաղաքի բնակիչներից մէկին։ Բոլոր քաղաքացիք միաձայն—ինչպէս միշտ պատահում է Ամերիկայում—իրանց անբաւականութիւնը յայտնեցին դպրանոցի աւագանիին։ Թէ դպրանոցի պատիւը և թէ նոյն իսկ վերատեսչի պատիւը պաՀանջում էր որ այդ գործի մասին խիստ քննութիւն լինի։

Բրէնչը բոլոր ուսանողներին ժողովեց և ամենախիստ կերպով յանդիմանեց նրանց. խօսք առաւ նրանցից՝ որ այդպիսի դէպքեր այլ ևս չի կրկնուելու, և յայտարարեց, թէ մեղաւորին անյապաղ արտաքսելու է դպրանոցից։

Ուսանողների մեծամասնութիւնը՝ մեղադրուածին անմեղ տեղը դրկուած Համարելով՝ նրա կողմը բռնեց։

—Եթէ Բէյլին արտաքսեն, ես իսկոյն կը դուրս գամ դպրանոցից, բացականչեց աւագ աշակերտներից մինը, երբ Բրէնչը ուզում էր դուրս երթալ։

—Նոյնպէս և ես, ձայնակցեց մի ուրիշը։

—Դէ ուրեմն ինձ էլ Հետդ քաշտուր, գոչեց երրորդը։

—Եւ ի՜նձ, և ի՜նձ, լսուեց էլի քանի մի ձայներ։ Թող այս պարոնները չերևակայեն, թէ ուսանող պատանիներս իրաւունք չունինք...

Ուսանողներից շատերը հպատակուեցան ընդհանուրի տրամադրութեանը և միացան անբաւականների խմբին։ Գոնէ կարելի է ասել, որ քսան հոգի յայտնեցին իրանց հաստատ մտադրութիւնը՝ որ դպրանոցից կը դուրսգան, եթէ Բէլլը արտաքսուի։

Բայց ի՞նչպէս եղաւ յուզուած խմբի զարմանքը, երբ Ջէմս Հարֆիլդը, դէպի որին դիմեցին ամենքը խորհուրդ հարցնելու, շատ սառնօրէն պատասխանեց.

—Նախ և առաջ ես կը խնդրէի ձեզանից՝ մի ինձ բացատրէք թէ՝ ինչո՞ւ պէտք է ես անպատճառ դուրսգամ դպրանոցից, եթէ նրանից արտաքսեն մի ուրիշին։

—Մենք ուզում ենք ցոյց տալ, որ մենք անբաւական ենք, նկատեց ուսանողներից մինը։

—Օրինակ՝ ինչո՞վ։

—Նրանով, որ Բէլլին տրտաքսում են դպրանոցից։

—Բայց, ախար, նա դեռ արտաքսուած չէ։ Շատ կարելի է ամենևին չեն էլ արտաքսում։

—Ասենք թէ. միայն մենք չենք ուզում, որ համարձակուին մեր ընկերոջ հետ այդպէս վարուել։

—Օրինակ՝ ի՞նչպէս։

—Մի՞ թէ կարելի է անպատուել մի մարդու, նրա դէմ հալածանք յարուցանել լոկ նրա համար, որ նա փողոցում հանդիպած որևէ մէկին չի ասել այնպէս, ինչպէս հարկն է։

—Բայց նա ի՞նչպէս է ասել, շարունակեց հարցնել Հարֆիլդը։

—Քաղաքացին հաւատացնում է, որ իբր թէ նա իրան լիրբ խօսք է ասել։ Բայց ի՛նչ մեր բանն է այդ։ Մենք իբրև ընկերներ պարտական ենք միմեանց համար թևութիկունք լինել։

—Լինի նա ա՛րդար թէ ա՛նարդար—ողջ մէկ է։

—Ի հարկէ։

—Է՜, ես ուրիշ կարծիքի եմ, ընդդիմաբանեց Հարֆիլդը վճռողաբար։ Եթէ ընկերներիցս մինը վտանգի մէջ ընկած լինի, որի պատճառն ինքը լինի եղած, ես

ուրիշ կերպ չեմ գնալ նրան օգնելու, բայց եթէ ազնիւ ճանապարհով։ Դրա համար ես ձեզ պատասխանատու եմ։

—Իմ կարծիքով, քաղաքացու կողմից այդ ստորութիւն էր,—տաքացաւ ուսանողը,—որ նա հրապարակօրէն զանգատուեց դպրանոցի աշակերտի վրայ նրա համար, թէ նա դէպի իրան շատ էլ քաղաքավարի չի վարուել։ . . .

—Ձեզ հետ ես համաձայն չեմ, ասաց Ջէմսը։ Որքան որ ես կարողացայ նկատել, Բէլլը՝ թէ լեզուով և թէ շարժուածքով, շատ ապերասան է. և եթէ նրան մեղադրում են—ասել է զուր չէ։

—Այդ բոլորից այն է դուրս գալիս, Հարֆիլդ, որ մեր նրան օգնելու մտադրութիւնը դուք չէք հաւանում։

—Ուղիղ որ չեմ հաւանում։ Թող Բէլլը վիրաւորանք կրած քաղաքացուց ներողութիւն խնդրէ և պ. Բրէնչին էլ խօսք տայ, որ նա այլ ևս քաղաքում անկարգութիւն չի անիլ—այն ժամանակ առաջինը ես կերթամ խնդրելու, որ նրան չարձակեն դպրանոցից։ Կրկնում եմ, թող նա առաջին քայլն անէ։

Պատանիների յուզմունքը շիջաւ։ Ուսանող Բէլլը կատարեց այն բոլորը, ինչ որ նրանից պահանջեցին, և նա մնաց դպրանոցում։ Իսկ Հարֆիլդը՝ իր ողջամտութեան, իր ազնուութեան և հաստատակամութեան շնորհով՝ Ջեստէրում բազմաթիւ անձնանուէր բարեկամներ ճարեց։ Նա հէնց վաղ երեխայութիւնից անյողդողդ համոզմունք կազմեց իր մէջ և մինչև իր կեանքի վերջն էլ պահպանեց։

Հարֆիլդի համար ուսումնական երկրորդ կիսամեակը առաջինից շատ աւելի յաջող անցաւ։ Նա նոր-նոր տեսութիւնների լաւ պաշար հաւաքեց, Վուդվօրթի մօտ աշխատած փողերով իր ծախսերը ծածկեց և, բացի այդ, մի քանի տասնեակ ռուբլի էլ ընծայ տարաւ իր մօրը։

XVII

Հարֆիլդի տուն վերադարձից յետոյ հազիւ թէ մի օրուգիշեր էր անցել՝ նա նորից սկսեց ճամբայ ընկնելու պատրաստութիւն տեսնել։

—Ե՞րբ կը վերադառնաս, հարցրեց մայրը։

—Երբ որ ուսումնարանում պաշտօն կը ճարեմ։

Ուսումնարանը՝ որի համար ուսուցչի պահանջ կար՝ գտնվում էր «փայտաշէն խրճթից տասը մղոն հեռաւորութեան վրայ։ Ջէմսը հետիոտն գնաց այնտեղ։

Հասնելուն պէս խնդիր տուեց յանձնաժողովին. բայց նրան մերժեցին, ասելով՝

—Մեզ «մանուկներ» հարկաւոր չեն։

—Ջեստէրեան դպրանոցի վերատեսուչ պարոն Բրէնչից ես վկայական ունիմ, իրան թոյլ տուեց նկատելու Ջէմսը։

—Այդ մեր բանը չէ։ Շատ կարելի է, դուք շատ բան լինիք սովորած, բայց հօ դրանից չափահաս չէք դարձել։

Հարֆիլդին սառը քրտինք վրատուեց։ Նա ճամբան շարունակեց։ Գնաց առաջին ուսումնարանից ամենամօտիկը եւ իրան առաջարկեց։

—Շատ ցաւում եմ, որ ուշացել էք։ Գէթ մէկ շաբաթով եթէ վաղ էիք եկել՝ ուրախութիւնով մենք ձեզ կընդունէինք, ասաց յանձնաժողովի անդամը։ Փորձեցէք, գնացէք պարոն Նելսոնի մօտ՝ Նորթօնեան նահանգումն է։ Այստեղից մի երեք մղոն կը լինի. այնտեղ էլ ուսումնարան կայ։

Մեր Հարֆիլդը կամաց-կամաց առաջ գնաց դէպի ցոյցտուած տեղը։ Մթնով նա հազիւ-հազ կարողացաւ Նելսոնին ներկայանալ։ Բայց այնտեղ եւս բռնուած էր տեղը։ Նելսոնը գթաշարժուեց՝ որ նա պէտք է գիշերով տուն վերադառնայ, ուստի թողեց որ իր տանը գիշերէ։

Ջէմսին չյաջողուեց։ Միւս օրը նա տուն դարձաւ եւ յայտնեց, որ իրան համար այլ եւս ուսուցչի պաշտօն չի որոնելու։

Մայրը՝ տեսնելով որ նա շատ շփոթուած ու յոգնած է՝ խորհուրդ տուեց պառկել-քնել։

Պառկեցին քնելու։ Արշալուսին Ջէմսը յանկարծ լսեց, որ մէկը դրսից կանչում է տիկին Հարֆիլդին եւ հարցնում է, թէ ո՞ւր է Ջէմին։

—Տանն է։ Միայն դեռ չի վերկացել։ Ինչի՞ համար էք ուզում նրան, հարցրեց իր կողմից մայրը, բանալով սայլատո սն դռնակը՝ որպէսզի մի տեղեկանայ, թէ արդեօք ո՞ւմ է հարկաւորուել իր Ջէմին այդպէս գիշերհանայ։

—Ներողութիւն կրեցէք իմանալ՝ եկող ձմեռ արդեօք նա յանձը չի առնիլ Լէջի ուսումնարանում կառավարչի պաշտօն, շարունակեց եկողը:

Լսելով խօսքս ո ւ ս ո ւ մ ն ա ր ա ն՝ Ջէմին իսկոյն տեղաշորից վերթռաւ, երեք րոպէում հագնուեց և դուրսեկաւ անձամբ խօսելու չսպասած հիւրի հետ: Երևաց որ նա ուսումնարանական շրջանի անդամն էր՝ Օգիօ գաղթականների մէջ յայտնի մի անձնաւորութիւն:

Այդ ուսումնարանը, որ ուսուցչի պահանջ ունէր «փայտաշէն խրճթից» մի մղոն հեռու կը լինէր:

—Ջէմս, ես եկել եմ ձեզ մօտ Լէջի ուսումնարանի ուսուցչի պաշտօն առաջարկելու, ասաց Հարևանը: Դուք լաւ ռոճիկ կ'ստանաք—ամսական տասնուվեց ռ. և 66 կոպ. և ձրի ճաշ: Բայց հարկաւոր եմ համարում ձեզ առաջուց ասել, որ մեզ մօտ ուսումնարան չէ, այլ անյոյս կապըկտրածների բազմութիւն, որոնց կոպէկ չի տալ մարդ, և որ դուք նրանց հետ անչափ շատ գործ էք ունենալու:

—Այդ ասենք ոչինչ, պատասխանեց Ջէմսը, բայց ահա թէ ինչն է անախորժելին՝ մենք շատ մօտիկ հարևաններ ենք և երեխաններն ինձ մօտից ճանաչում են. չափից դուրս յարմար է ուսուցիչ լինել մի բոլորովին անծանօթ տեղում, այնտեղ շատ հեշտ կը լինէր խիստ կարգապահութիւն պահել:

—Նրան մի օր ժամանակ տուէք խորհելու, շտապեց օգնութեան հասնել որդուն տիկին Հարֆիլդը: Եգուց առաւօտ մենք ձեզ կը տեղեկացնենք:

—Շատ լաւ: Միայն յոյս ունիմ, թէ դուք ինձ փուստ չէք թողնելու, ասաց հարևանը կոտակով և գընաց տուն:

Միւս օրը տիկին Հարֆիլդը որդուն խորհուրդ տըւեց դնալ Ամօս ամու մօտ, առանց որի ընտանիքի մէջ ոչոք որևէ գլխաւոր հարց չէր վճռում: Նա ևս հաստատեց հարևանի խօսքերը, որ իրաւ Լէջի ուսումնարանը կապըկտրածների բուն է, և որ Ջէմսը իր աշակերտների հետ շատ գործ է ունենալու:

Յետոյ ծերը մտածմունքի մէջ ընկաւ:

—Բայց . . . և այնպէս այդ տեղն ընդունի՛ր, Ջէմս, վճռեց նա . . . Եթէ դու ուսուցչական պաշտօնով կը մտնես այդտեղ ինչպէս Ջ է մ ս Հ ա ր ֆ ի լ դ և, երեք տարուց յետոյ, երեխաներն ուրիշ կերպ քեզ չեն կանչիլ, բայց եթէ պ ա ր ո ն Հարֆիլդ, այն ժամանակ դու մեծ վարկ կ՚ստանաս, և որ գլխաւորն է, նահանգին մեծ բարիք արած կը լինիս։ Ախար, երեխաները—ապագայ քաղաքացիներն են։

—Դէ, ուրեմն ես այդ տեղը կընդունեմ, յայտարարեց Ջէմսը։

Այս խօսակցութիւնից յետոյ դեռ մի երկու շաբաթ չանցած, մէկ էլ ամբողջ շրջակայքում լուր տարածուեց, որ եկող ձմեռուանից՝ «Ջէմս Հարֆիլդը» սկսելու է Լէջի ուսումնարանը կառավարել։ Տղերքն ու աղջկերքը սաստիկ յուզմունքի մէջ ընկան. այս բանը նրանց համար անվերջ խօսակցութիւնների առիթ եղաւ։

—Ես Ջէմսին սիրում եմ, յայտարարեց մեծ երեխաներից մինը՝ նա շատ լաւ տղայ է, այնպէս ուսումնական, որ մեր բոլոր ուսուցիչներին կը կապի։ Նա չի թողնիլ որ ծուլանանք։ Նրա հետ կատակ անել, ո՜, չի կարելի։

Յանձն առնելով իր ուսումնարանական պարտականութիւնները կատարելու, Հարֆիլդը մտքով իրան համար մի նախագիծ կազմեց, թէ ինչպէս վարուի երեխաների հետ, որ փալախայի և ճիպոտի հարկաւորութիւն չլինի, եթէ այդ միայն հնարաւոր է։

Նա սկսեց նրանից, որ դիմեց աշակերտներին մի համառօտ, ազդու, բայց միևնոյն ժամանակ և շատ սրտաշարժ ճառով, որով իր ցանկութիւնը յայտնեց՝ լինելու նրանց համար բարեկամ, դաստիարակ, պաշտպան, և ոչ թէ դրանց հակառակը։ «Ես ձեզ օգնելու համար եմ եկել, և ոչ թէ ծեծելու, ասաց նա. դուք պէտք է ուսումնարանի նշանակութիւնը գնահատել իմանաք, դուք պարտական էք այս հիմնարկութեան վարկը պաշտպանել. ուրեմն՝ բարեկամաբար միասին աշխատենք՝ մեր ուսումնարանը շրջակայ բոլոր ուսումնարաններից ամենաբարձր դիրքի վրայ դնել։ Մեզանից է կախուած, որ գործը

լաւ գնայ. դուք ձեզ այնպէս պահեցէք, որ Լէջի ուսումնարանը օրինակելի համարուի»:

Հարֆիլդը խկոյն կարգադրեց թէ ով ինչ պէտք է անէ դասատան մէջ: Այն պատմութիւնները՝ որ նա կարդում էր փոքրիկ մանուկների համար, միշտ պարզ էին, վերին աստիճանի հասկանալի և չափից դուրս հետաքրքիր. մեծ աշակերտների համար նա նշանակեց բարձր ձայնով կարդալ և կարդացած նիւթի վրայ վիճաբանել, նրանց այդ բանը շատ դուրեկաւ. իսկ ազատ ժամերին թէ մեծերի և թէ փոքրերի հետ նա զանազան խաղեր էր խաղում, բայց և այնպէս երբէք նրանց հետ ընկերաբար չէր վարվում և միշտ էլ պահպանում էր իր արժանաւորութիւնը, այնպէս որ նոյն իսկ ամենաանյուսալի կապրկտրած մանուկներն անգամ զգում էին դէպի նրան ակամայ երկիւղ և անկեղծ յարգանք:

Ըստ ուսումնարանի սովորութեան, Ջէմսը հերթով իր աշակերտների ծնողաց մօտ էր ճաշում. այնպէս որ՝ ձմեռուայ ընթացքում նա բոլոր հարևանների մօտ էլ եղել էր, ապրելով մի քանի ընտանիքներում մի կամ երկու շաբաթ: Դրանց մօտ նրա ներկայութիւնը անհետք չմնաց: Երեխաների դասերն էր սովորեցնում, ծնողների հետ խօսում. երեկոները բարձր ձայնով կարդում էր կամ չափազանց գրաւիչ կերպով պատմում իր կեանքից կամ գրքերից առնուած որևէ սպատահար: Էլ սրանից յետոյ հարկաւո՞ր է ասել, որ դաստիարակի, երեխաների և ծնողների մէջ մի սերտ և անկեղծ բարեկամական կապ հաստատուեց:

Երբ ձմեռային ուսման ընթացքը վերջացաւ, աշակերտներն ու նրանց ծնողները միաձայն յայտնեցին, որ այդպիսի ընտիր ուսուցիչ, որպիսին Ջէմս Հարֆիլդն է, Լէջում դեռ ևս չէ եղած: Հէնց այդ մօքով էլ նրան վկայական տուին: Ամօս ամու գուշակութիւնը ևս կատարուեց: Երիտասարդ ուսուցիչը, որ երեխաների մէջ առաջ յայտնի էր «Ջէմս» անունով, աշնանը երբ նա մնաս բարով էր ասում իր աշակերտներին՝ ինքն իր ականջով լսեց, որ նրանք իրան ուրիշ կերպ չէին անուանում, բայց եթէ «պարոն Հարֆիլդ»:

Ջէմսը կրկին վերադարձաւ Չեստէրեան դպրանոց, բայց ոչ թէ էլի պառաւի կացարանում կենալու, ո՛չ, այլ իր հին բարեկամ Վուդվորթ հիւսնի տանը, որտեղ նա շաբաթական մէկ ռ. և 42 կոպ. վճարելով՝ ստանում էր սենեակ, ճաշ, և սպիտակեղէնն էլ լուանում էին։ Իսկ իբրև հասարակ արհեստաւորի Ջէմսին առանձնապէս օրինաւոր վարձ էին տալիս։ Նրա գործը տախտակներ ռանդելն էր։ Իրանց տանից եկած հէնց առաջին շաբաթ օրը նա 51 տախտակ ռանդեց և միանգամից աշխատեց 1 ռ. 39 $^{1}/_{2}$ կոպ. որով համարեա մէկ շաբաթուայ իր ծախսը դուրսբերեց։

Հարֆիլդը գրքերի համար ոչինչ չէր խնայում, ուստի՝ իրան համար շատ քիչ էր մնում։ Նրա հանդերձը աննշան կերպով լաւացաւ։ Նա ո՛չ տաք բաճկոնակ ունէր, ո՛չ ամառուան վերարկու. իր մաշուած հագուստի շնորհիւ երիտասարդ ուսուցիչը մի անգամ շատ անպատեհ դրութեան մէջ մնաց։ Բարձր դասատան աշակերտների հետ աղաքկարուկի վազելով՝ նա մի բանով ընկաւ և անդրավարտիքի մի կողմը վերէնվար պատռուեց։ Որպէսզի ազատուի երեխաների ծիծաղից՝ որոնք, ի՛նչ ասել կուզի, չէին խնայելու այդպիսի դէպքում և իրանց սիրելի ուսուցչին՝ Ջէմսը շտապով գնդասեղներով ամրացրեց պատռուածը և, իրիկունը գալով իր սենեակը՝ յուզուած սրտով պատմեց պատահած դժբախտութեան մասին իր տանտիրուհի Սաէյլասին, որնոր մի յարգելի պառաւ էր, և Ջէմիին իր որդու պէս էր սիրում։ Ջէմին ուրիշ փոխնորդ չունէր, այդ պատճառով մնացել էր շուարուած։

—Դու անհո՛գ կաց, հանգստացրեց նրան պառաւը։ Պառկի՛ր քնի՛ր դու, իսկ ես մի երկու ժամ կը նստեմ և այնպէս կը կարեմ պատռուածը, որ ոչ ոք չկարողանայ գտնել թէ ո՛րտեղն էր։ Բայց երբ, Աստուծոյ օգնութիւնով, դու ժամանակով նախագահ կը դառնաս՝ քո ծիծաղն էլ կը գայ, երբ մտաբերես, որ այսպիսի չնչին բաները դու դժբախտութիւն էիր համարում, եզրափակեց իր խօսքը յարգելի պառաւը ժպտալով։

XVIII

Ջէմին արդէն շուտով աւարտելու էր Չեստէրեան դպրանոցի ուսման ընթացքը, երբ պատահմամբ նրան հանդիպեց Նոր-Անգլիայի Կոլէջի (բարձրագոյն դպրոց) ուսումնական մասի կանդիտատը և սկսեց խօսակցել նրա հետ։

—Ինչո՞ւ համար մեզ մօտ մտնել չէք կամենում, հարցրեց նրան կանդիտատը։

—Միջոց չունիմ, ես շատ չքաւոր եմ, պատասխանեց Ջէմսը։

—Սրանք դրան օգնել կարելի է։ Դուք կարող էիք թոշակառու աշակերտների թւում ընդունուիլ։ Վերջապէս, մեզանում ձմեռը շրջակայ ուսումնարանների համար ուսուցչի մեծ պահանջ կայ, և յանձնաժողովները այդ տեղերի համար առաւելապէս ուսանողներին են նըշանակում։ Մեր ուսումնարանի ուսանողի ապրուստը—եթէ միայն նա խնայող է—ուսումնական տարուայ համար 278 ռուբլուց աւելի չի նստի։ Բացի թոշակադրամից, եթէ դուք որ և է կողմնակի աշխատանքից էլի մի քիչ եկամուտ ունենաք, այն ժամանակ դուք առանց նիւթական զրկանքի կարող էք ապրել։ Մեր ամենալաւ աշակերտներից մինը, ամբողջ ուսման ընթացքում, իրան համար ապրուստ էր ճարում փայտ սղոցելով, այնպէս որ, երբ նա գնաց այստեղից, հատ կոպէկ պարտք անգամ չունէր—բոլորը վճարել էր իր աշխատած փողերով, և բացի այդ, կարծեմ մի քիչ բան էլ հետը տուն տարաւ։ Իսկ ուսանում էր գերազանց։

—Կոլէջում բարձրագոյն ուսման ընթացքն աւարտելու համար ամենակարճ ժամանակը ո՞րքան է, հարցրեց Ջէմսը։

—Չորս տարի հարկաւոր է պատրաստուելու համար և չորս տարի էլ բարձրագոյն—ճեմարանական ուսման համար։ Բայց մի քանի ուսանողներ ուղղակի երկրորդ պատրաստական ընթացքը մտնելով՝ մի տարով էլ ուսումնարանից վաղ են աւարտում։ Բոլորը կախուած է պատրաստուելուց և նիւթական միջոցներից։ Օրինակ՝

ընկերներիցս մի քանիսն ապրուստի համար պարտքով փող են վերցնում և վերջը հատուցանում, երբ ընտիր պաշտօն են ստանում։

—Չէ, եղբայր, ես ինձ խօսք եմ տուել երբէք պարտք չանել, ընդդիմաբանեց Հարֆիլդը։ Ասել է բոլոր ժամանակ ես իմ ձեռքիս աշխատանքով պէտք է ապրեմ։ Բայց և այնպէս՝ ես կաշխատեմ անպատճառ կօլէջ մտնել։

Ինչպէս ասաց—այնպէս էլ արաւ։ Նա անմիջապէս գնեց իրան համար լատիներէնի և յունարէնի ձեռնարկներ և սկսեց հին լեզուները սովորել։

Նա արդէն երրորդ ընթացքն աւարտելու վրայ էր, երբ նրանց դպրանոց մտաւ մի համեստ, շնորհալի, ջահիլ օրիորդ Լուկրեցիա Րուդօլֆ անունով։

Ջէմսը՝ բնական շատ ամաչկոտ լինելով՝ միշտ խոյս էր տալիս կանանց ընկերութիւնից, բայց ազնիւ օրիորդ Րուդօլֆի արտաքին գրաւչութիւնը, և որ գլխաւորն է, նրա շնորհունակ ու ընտիր բնոյթքը ակամայ դէպի իրան էր քաշում երիտասարդին։

Ջէմսի և նորեկ ուսանողուհու մէջ երկու ընկերօջ իդէալական բարեկամութիւն հաստատուեց։ Հարֆիլդը զարմացած էր, հանդիպելով իր ջահիլ հասակակցուհու մէջ այդ աստիճան բազմաթիւ լուրջ մտաւոր տեսութիւնների։ Նրանք սկսեցին միասին աշխատել և համարեա հաւասարապէս առաջ էին ընթանում։ Ուսման ընթացքը երբ աւարտեցին, նրանք մեծ ցաւակցութիւնով բաժանուեցին միմեանցից, բոլորովին մտքերովն անգամ չանցնելով՝ թէ վերջերում էլի իրանք միմեանց հանդիպելու են, բայց այնպէս՝ որ էլ երբէք չբաժանուեն իրարից։

Վերջին ձմեռը, դպրանոցից դուրս գալուց առաջ, երիտասարդ Հարֆիլդը զարմացրեց և ուրախացրեց իր մօրը, որնոր անսպասելի կերպով նկատեց նրա մէջ սէր դէպի ընտիր ուսմունքները։ Օգիօի անտառներում կիրակնօրեայ ազգային ժողովները լողների մեծ բազմութիւն գրաւեցին, հէնց որ յայտնի եղաւ, թէ Ջէմս Հարֆիլդը մտադիր է «խօսելու»։ Մայրը արտասուքն աչքերին լսում էր իր որդու կրակոտ ճա-

ռերը և մտքի մէջ շնորհակալ լինում Աստուծուց՝ որ նա դէպի իրան այդպէս ողորմած գտանուեց։

Երևում է, որ մեր Ջէմսը զուր տեղը չէ քահանայութեան ձգտում, շշնչաց մի անգամ Գարրի Բօյտօնի ականջին երիտասարդ ունկնդիրներից մինը, որ նրա դասընկերն էր եղած։

—Ո՞վ է իմանում նրա բանը. շա՛տ կարելի է, պատասխանեց Գարրի Բօյտօնը։

—Բայց նա նշանաւոր քարոզիչ կը դառնայ, մէջ ընկաւ մի երրորդ ուսանող։ Ես համոզուած եմ, որ բընիկները երբ նրա քարոզները լսեն՝ զարմանքից բերանները բաց կը մնայ։

—Բայց նա այդ բանի համար պէտք է սպասէ, գէթ մի տասը տարի, եթէ աւելի չէ, շարունակեց առաջինը։

—Է՛հ, տասը չէ-չէ քսան, էլի վեց ասես հա՛, նըկատեց Գարրին։

—Յոյս ունիմ, որ նա այն ժամանակ իրան համար նոր հագուստի պատուէր կը տայ, ծաղրածութիւնով վրաբերեց առաջինը։

—Նա իսկի այդպէս դատարկ բաների վրայ ուշադրութիւն կը դարձնէ՞։ Նրա աչքին կատարելապէս մի գին ունի՝ բամբակից է եղած կտորը, թանգ մահուդից, թէ՛ մետաքսից։ Այդ մարդը աշխարհային չնչին բաներից շատ բարձր է։ Մէկ էլ որ նրան լսելու համար են գալիս ազգային ժողով և ոչ դատելու՝ թէ նա ինչ ունի հագած։

Եկաւ ամառը, նրա հետ եկաւ և աշխատանքի ամենալաւ ժամանակը։ Գարրի Բօյտօնը և Ջէմս Հարֆիլդը—այս անբաժան բարեկամ-ընկերները, ուղևորուեցան դէպի հարևան կալուածատէրերը՝ իրանց համար գործ գտնելու։

Գնացին նրանք բազմաթիւ մարգագետիններ ունեցող մէկ կալուածատիրոջ մօտ։

—Ի՞նչ կը կամենաք, եղբայրներ, ինչու՞ համար էք եկել, հարցրեց նա։

—Գործ ենք խնդրում, պատասխանեց Ջէմսը։

—Իրաւ է, խնդրում էք, բայց հնձել էլ կարո՞ղ էք։

—Կարող ենք, ծիծաղեցին երիտասարդ բանուորները։

—Ի՞նչ գնով։

—Ինչքանի որ արժանի կը լինինք, այն էլ կը տաք։

Կալուածատիրոջը դուրեկաւ այդ համարձակախօս, առողջ ջուխտակը։ Նա ինքն առաջնորդեց նրանց դէպի հնձատեղ և, դառնալով դէպի երեք հասակաւոր հնձողներին, ասաց.

—Տղե՛րք, ահա ձեզ օգնելու համար էլի երկու ջահիլներ։

Մեր ջահիլները խորամանկութիւնով իրար նայեցին, մանգաղները ձեռք առան և խկոյնաւէթ գործի կացան։ Դեռ մի ժամ անցած չէր լինի՝ նրանք ահագին տարածութիւն հնձեցին. խիտ խոտը հիւթալից ցողուններով պառկել էր նրանց ճանապարհի վրայ, և շատ դուրալի բան էր տեսնելը, թէ ինչպէս կանոնաւոր շարժմունքով նրանց սուր մանգաղները թռչում էին ճոխ մարգագետնի վրայից։

Կալուածատէր-պարոնը հիացած էր այդպիսի քաջ բանուորներից և չկարողացաւ իրան զսպել՝ որ չյանդիմանէր հին հնձողներին ասելով.

—Մի նայեցէք, ճանճ-կուլտուողներ, ահա թէ ինչպէս հարկաւոր է հնձել։ Ի՛նչպէս մաքուր հնձած է, ի՛նչպէս են շարժում մանգաղները։ Ամօթ ձեզ, տղերք. ջահիլները ձեզ տուրն անցան։

Իսկ ջահիլները միմեանց նայեցին և ծիծաղեցին։ Այդպէս անցաւ երկու շաբաթը։ Վերջին շաբաթ իրիկունը մշակներն եկան հաշիւ տեսնելու։

—Ի՞նչ է, եղբայրներ, վճարեմ հա՞ ձեր հնձածի համար, հարցրեց խորամանկ կալուածատէրը, զգալով՝ որ իրան խիղճն էլ է ասում, թէ հարկաւոր է «ջահիլներին» ևս վճարել այն օրինաւոր վարձը, ինչքան որ հասակաւոր մշակներին է տալու։

—Վճարեցէք մեզ այն, ինչքանի որ արժանի ենք պատասխանեց Հարփիլդը։

—Առաջուց ասում եմ ձեզ, որ չի կարելի մանուկներին տալ այնքան վարձ, որքան հասակաւորներին։

—Այո՛, բայց, ախար, չէ՞ որ դուք էիք, որ մեծերին իբրև օրինակ ցոյց էիք տալիս այդ «մանուկներին», ընդդիմաբանեց Հարֆիլդը։ Քանի որ դուք ինքներդ էլ տեսաք, թէ ինչպէս մենք ձեր այդ մեծերին մեր ետև թողինք, դուք իրաւունք չունիք զրկելու մեզ հասանելի արժանաւոր վարձից։

—Թող այդպէս լինի, ուրիշների հետ հաւասար վարձ ստացէք, ասաց կալուածատէրը, բայց լաւ իմացած կացէք, որ դուք առաջինն էք, որոնց ես հասակաւոր մշակների հաւասար վարձ եմ վճարում։

—Յոյս ունիմ թէ՝ և «ոչ էլ վերջինն ենք», պատասխանեց Ջէմսը, որ ամեն բանի պատրաստի պատասխան ունէր։

Այդ միջոցներում Ամերիկայի մէջ նեգրների ազատութեան համար յարուցած հարցի առիթով՝ սկսած էր սաստիկ յուզմունք տիրել մտքերին։ Ազատութեան համակրողների թիւը բազմաթիւ էր Օգիում. ոչ միայն քաղաքային ուսումնարաններում, բարձրագոյն դպրոցներում և հասարակական տեղերում, այլ և գիւղական ուսումնարաններումն անգամ ազատութեան մասին բարձրաբարբառ քարոզութիւններ էր լինում։ Ամերիկական հասարակապետութեան մէջ ստրկութիւն լինի՞, թէ՞ չլինի։ Ահա այն հարցը, որի վրայ Ջէմս Հարֆիլդը քիչ չաշխատեց։ Նա գրում էր և խօսում այս տեմայի վրայ իբրև եռանդոտ պերճախօս մարդ, որը ատում է ամեն տեսակ բռնութիւն։

—Ազգի համար նախատի՛նք է այս, տաքացաւ նա միանգամ, երբ ընկերների հետ խօսում էր իրան անհանգստացնող հարցի մասին։ Մենք պատերազմեցինք և մեզ համար ազատութիւն ձեռք բերինք, և յանկարծ թոյլ ենք տալիս մեզ մօտ ստրկութիւն լինելու, որնոր շատ աւելի ամօթալի է, քան այն, որ մեզ շղթայի մէջ էր պահում։ Այս խայտառակութիւն է, Ամերիկայի վրայ այս նախատինքի բիծ է. . . Ստրուկ-նեգրների վրայ լոկ մտածելն անգամ արիւնս եփ է բերում երակներիս մէջ։

Ես չեմ հասկանում, ինչպէս կարող են համբերել կրթուած և զարգացած մարդիկ, որ իրանց մօտ այդպիսի ստորացուցիչ ծառայութիւն լինի։ . . .

Կարելի է ենթադրել, թէ ինչպէս Ջէմսը եռանդոտ և պերճախօսութիւնով պաշտպանեց իր հայացքները և համոզմունքները այդ հարցի մասին, երբ միանգամ ճառախօսեց նա «Դեբատեան» ընկերութեան նիստերից մինում։ Ներկայ եղողներն ապշած էին մնացել երիտասարդ բեմբասացի իդէաների փայլունութիւնից, տեսութիւնների հարստութիւնից և տրամաբանական փաստերից։ Պարզ երևում էր, թէ նա այդ հարցը սիրով ուսումնասիրել էր և շատ գրքեր ու բրօշիւրներ կարդացել՝ որպէս զի լաւ պատրաստուած մտնէր ուսումնական վիճաբանութեան մէջ։

—Եղբայրներ, սրան ուղարկենք իբրև պատգամաւոր Օգիօ նահանգի կողմից միջազգային ժողովին, աղաղակեցին ուսանողները, երբ նիստը վերջացաւ։

—Խնդրեմ ինձ ոչ մի տեղ չուղարկէք, մինչև Ջեստերեան դպրանոցից կանդիդատի պաշտօնով դուրս գալս, ընդդիմաբանեց ծիծաղելով Ջէմսը՝ դիտմամբ կատակի տեղ դնելով ընկերների առաջարկութիւնը։ Բացի այդ, պէտք էր իմանալ թէ ո՛վ պիտի վճարէր ընտրութեան ծախսերը։

—Ո՞վ, ի հարկէ, կանդիդատն ինքը՝ յարգոյապատիւ Ջէմս Հարֆիլդը, բացականչեց Գորրի Բօյտօնը, և նրա խօսքերը ծածկուեցան ներկայ եղողների բարեկամական բարձր ծիծաղով։ Ամենից բարձր Ջէմսն էր ծիծաղում։

Այն րոպէից, երբ Հարֆիլդը վճռեց բարձրագոյն դպրոց մտնելու, լատիներէն լեզուն նրա առանձին մըտադիւր ուսումնասիրութեան առարկան եղաւ, նա նրան էր նուիրում իր ամեն մի ազատ ժամը։ Աշնան վերջերում, եկաւ Ջեստէր նրա մօտ համօրէն գիտութիւնների ինստիտուտի ուսանողներից մինը. այդ ուսումնարանը նոր էր բացուել Այրամի մէջ, որը Օգիօ նահանգում Պարթէջի գրաֆութեան մէջ էր գտանվում։ Այնտեղ երկու սեռից ընդհամենը հարիւր հոգի ուսանող կար, բայց այդ թիւը օրըստօրէ շատանում էր։ Նորեկ ուսանողը

Հարփիլդին շատ մխիթարական տեղեկութիւններ հաղորդեց, նա ասաց որ Այրամում կեանքն այնպէս թանգ չէ, ինչպէս Չեստէրում, որ ինստիտուտի ուսուցիչները բոլորն էլ հոգեւորական ընկերութիւնից են, որին պատկանում են եւ Հարփիլդեանները, եւ որ ուսումնարանը նահանգի մէջ բարի համբաւ ունի։ Այն ժամանակ Ջէմսը վճռեց նախ եւ յառաջ պատրաստական ընթացքն անցնել Չեստէրում եւ յետոյ արդէն մտնել կօլէջ։

1850 թուականի նոյեմբերին Չեստէրեան դպրանոցից աւարտողների մէջ Ջէմսը կանդիտատի կոչում ստացաւ. մնաս բարովին նա մի այնպիսի փայլուն ճառ խօսեց, որ կատարելապէս բոլոր լսողներին գրաւեց։

Ձմեռը մօտենալու ժամանակ, մայրը համոզեց Ջէմսին մի քիչ հանգստանալ եւ ուղեկցել իրան Կլեւելանդ եւ Ձանեսվիլ, ուր նա հիւր էր գնալու իր ազգականների մօտ։ Եւ որովհետեւ այդ ժամանակ հէնց նոր էր երկաթուղու գիծը բացուել Կլեւելանդի եւ Կօլումբուսի մէջ՝ որ Օգիօ նահանգի մայրաքաղաքն էր, ուստի՝ մօր ու որդուն յաջողուեց առաջին անգամ շոգիով ճանապարհորդել։ Բնութեան վրայ արած գիտութեան յաղթանակը խորը տպաւորութիւն ունեցաւ զգայուն երիտասարդի վրայ։

Ընդհանրապէս, քաղաքային կեանքի առաջին ծանօթութիւնը, վիթխարի շինութիւնների տեսքը, փողոցների լայնութիւնը, անդադար շարժողութիւնները՝ չէին կարող անհետ անցնիլ մի երիտասարդ մարդու համար, որ անտառներումն էր մեծացել։ Նա առաւօտից մինչի իրիկուն ամեն բանի նայում էր, սովորում էր, ամեն օր վազում էր տեղական դատարանի նիստերին ներկայ լինելու եւ հիացած ասում էր մօրը, թէ այս ճանապարհորդութիւնն իր համար դիտողական ուսման ընթացքն է։ «Ես, մայրիկ, այնքան բան տեսայ եւ այնքան բան լսեցի այստեղ, որ այժմս ես պարզ հասկացողութիւն կազմեցի այն բանի մասին, թէ ինչ բան է հասարակական գործունէութիւն», բացականչեց նա մի անգամ, երբ վերադարձաւ տուն քաղաքում շրջագայութիւնից։

Կլեւելանդից մինչեւ Զանեսվիլլ անցնող ճանապարհը մօր ու որդու համար աննկատելի կերպով անցաւ. այնտեղ մօրաքրոջ մօտ մի քիչ հիւր մնալով՝ նրանք նըստեցին մի փոքր մակոյկ եւ փոքրիկ գետի վրայից դէպի ներքեւ շարունակեցին իրանց ճանապարհը Զանեսվիլլից 18 մղոն հեռու, ուր նոյնպէս կենում էին նրանց ազգականները։ Տիկին Հարֆիլդը շատ ուրախացաւ նրանց տեսութեանը. եւ ինչպէս չուրախանար, մօտ 15 տարի կը լինէր, ինչ նա իր մօտիկ ազգականներից ոչ մէկին չէր այցելել։

Ջէմսը տեղը դադարել չէր կարողանում. նա սկսեց տեղեկանալ, թէ արդեօք այդ մօտերքում ուսուցչի տեղ կա՞յ, եւ խոկոյն երեք ամսուան մնալու համար սկսեց պատրաստութիւն տեսնել։ Ուսումնարանը ամենաողորմելի դրութեան մէջ էր. թէ ծնողներից եւ թէ հոգաբարձութեան անդամներից ոչ ոք չէր հոգում գոնէ փայտի հարկաւոր պաշարի մասին, այնպէս որ երեխաները եւ ուսուցիչը ցրտից դողդողում էին փայտաշէն խրճիթում։ Բախտաւորապէս ուսումնարանից մի քանի սաժէն հեռաւորութեան վրայ հին մնացած քարածուխի հանք կար։ Ջէմսը աշակերտներին առաջարկեց, որ դասերից ազատ ժամերին իրանք ձեռք բերեն իրանց վառելիքը։ Երեխաները նրա հետ ի միասին սկսեցին քարածուխ կտրել, եւ արդէն քանի մի օրից յետոյ ուսումնարանի խրճիթի փոքրիկ վառարանից ամեն առաւօտ չաղ կրակի բոց էր բարձրանում։

Ուսումը լաւ առաջ էր գնում, չնայելով այն բանին որ երեխաների մեծամասնութիւնը մի առանձին զարգացումով չէր գերազանցվում։ Ուսումնարանի մասին շատ լաւ էին խօսում. ծնողները՝ որոնք մինչեւ այդ ժամանակ անտարբեր էին դէպի իրանց զաւակների կրթութեան գործը՝ այժմ սկամայ սկսեցին նրանով հետաքրքրուել, եւ երբ, երեք ամիսն անցնելուց յետոյ, Ջէմս Հարֆիլդը իր մօր հետ այնտեղից հեռացաւ, ամենքն էլ անկեղծօրէն ափսոսացին։ Երեխաները եւ նրանց ծընողները դեռ երկար ժամանակ յիշում էին Օգիօից եկած իրանց խելօք եւ բարի ուսուցչի մասին։

XIX

Երբ յայտնի ժամանակամիջոցը հասաւ՝ Ջէմսը դէպի Այրամ ուղևորուեց, ուսումնարանական յանձնաժողովին ներկայացաւ և յայտնեց իրան ով լինելը. որ ինքը երեք տարի Չեստէրեան դպրանոցումն է եղել, երեք ձմեռ ուսուցչութիւն է արել տեղական ուսումնարաններում և ցանկանում է այժմ ինստիտուտ մտնել՝ ուսման ընթացքը վերջացնելու համար։

—Ես, պարոններ, չքաւոր եմ, ուղղակի յայտնեց նա,—ես ինձ համար վճարելու համար ոչինչ չունիմ, չի կարելի արդեօք ինձ դռնապան կարգէք։ Ես կը զանգահարեմ և դուռը կաւելեմ, իսկ փոխանակ ռոճիկ տալու՝ դուք իմ աշխատանքս համարեցէք թէ դասախօսութիւնների համար վճարում եմ։

—Ինչպէս իմանանք, թէ դուք կարող էք այդ պարտականութիւնները լաւ և ճշտութիւնով կատարել, հարցրեց յանձնաժողովի անդամներից մինը։ Այստեղ ձրի մենք ոչ ոքի չենք սովորեցնում։

—Փորձեցէք. ինձ երկու շաբաթ ժամանակ տուէք. եթէ ես ձեզ պէտքը չգամ—կերթամ, պատասխանեց Հարֆիլդը, առանց ուրիշ բան աւելու։

Այդ ժամանակ նրա 20 տարին նոր էր լրացել։ Զանգահարողի և գլխաւոր սրբողի պաշտօնը յանձնեցին նրան, ուրիշ խօսքերով՝ սրահի պահապան նշանակեցին։

Հէնց առաջին օրից նա աշխատեց մօտենալ տեղական հիւսն—կապալառուին, նրա հետ գործ շինելու համար պայմանաւորուեց և յետոյ չորս ուսանողների հետ մի սենեակ վարձեց։ Ինչ ասել կուզի որ նեղուածք էր, բայց նեղուածքի մէջ էլի կարելի է ապրել. եթէ միայն զրկանք չլինի։ Երբոր այս հոգսերը վերջացան, Ջէմսը սկսեց իր պաշտպանողական ճառը գրել, և նա այնպիսի բարեխղճօրէն այդ բանի մասին նիւթեր պատրաստեց՝ որ ուսուցչապետների ուշադրութիւնը իր վրայ գրաւեց։ Զանգահարողի պաշտօնը ստիպում էր նրան համարեա արշալուսից առաջ զարթնել, որովհետև առաջին զանգը պէտք է տար ճ ի շ տ հինգ ժամին։ Ամենախիստ ճշտութիւն

էր պահանջվում՝ մի րոպե ո՛չ վաղ և ո՛չ էլ մի րոպե ուշ։ Ճշտություն սիրող Հարֆիլդի համար կատարելապես ողջ մէկ էր՝ 4-ին թէ 5-ին վերկենալ. օրուայ մէջ երեք թէ տասներկու անգամ զանգ խփել։ Ինչպէս որ նրան հրամայում էին՝ այնպէս էլ կատարում էր նա։

Ջէմսը երբ սրահի պահպանութիւն էր անում Այրամեան ինստիտուտում, այդտեղ ուսանում էր և մի երիտասարդ ամերիկուհի, որնոր այժմս բնակվում է Իլլինօիս նահանգում. ահա թէ Ջէմսի մասին նա ինչ է պատմում.

«Երբ Հարֆիլդը մեր ուսումնարան մտաւ, դասախօսութիւնների համար վճարելու փոխարէն՝ նա դռնապահի պաշտօն սկսեց կատարել, այսինքն զանգահարում էր և գաւիթն աւելում։ Կարծես հէնց հիմա ես տեսնում եմ նրան զանգի թոկը ձեռքին, որ պատրաստ է նշանակած ժամին ձգել և նրանով իմաց տալ ուսուցիչներին և աշակերտներին՝ հաւաքել իրանց տեղերը և այնօրուայ աշխատանքով պարապել։ Մինչի մեր պատրաստական դահլիճ մտնելը, չգադարելով զանգահարելուց՝ նա մեզանից իւրաքանչիւրին քաղցրութիւնով բարով էր տալիս։ Ամբողջ ինստիտուտում ամենաժողովրդական անձնաւորութիւնը նա էր. միշտ էլ ուրախ, աստղ-լոյս և գրաւիչ էր։ Նա վերին աստիճանի սրամիտ էր և ընդունակ, որի նմանը չկար մեր ուսումնարանում։ Նրա կատակները, որ այնպէս համով էին և զուարճալի, երբէք ոչ կծու էր լինում և ոչ վիրաւորիչ։ Ես չեմ յիշում, թէ նա նրանցով մէկնումէկին վիրաւորած լինի»։

Ջէմսը իր համեստ պարտականութիւնները պատուով և բարեխղճօրէն կատարելով՝ այնպէս ազնուացրեց նրանց, որ ընկերների աչքում բարձր նշանակութիւն ստացան, ինչպէսմթէ նա մի որևէ պատուաւոր պաշտօն լինէր կատարելիս։

Գարնանը՝ երբ Հարֆիլդը դեռ առաջին ընթացքումն էր՝ ինստիտուտի վերատեսչի գլխում մի լաւ միտք ծագեց. նա ուսանողներին առաջարկեց՝ ամեն մէկը միմի ծառ հանի անտառից և բերի ինստիտուտի շինութեան առաջ եղած հրապարակում տեղ փորի և տնկի։

Այսպիսով՝ սկիզբն եղաւ այն ապագայ այգու, որի ծառերի շուքի տակ հանգստանում են ուսանողների երրորդ և չորրորդ սերունդներ։

—Ա՜յ գեղեցիկ միտք, բացականչեց Հարֆիլդը լսելով արած կարգադրութիւնների մասին։ Բայց ինձ մեզանից իւրաքանչիւրս համաձայնի՞ ոչ թէ մի-մի, այլ երկ'-երկու ծառ հանել, այսինքն մէկը մեր փոխարէն, իսկ միւսը ուսանողուհի—օրիորդներից մէկնումէկի փոխարէն, այն ժամանակ ոչ միայն ինստիտուտի հրապարակը կը ծածկուէր, այլ մօտիկ փողոցներն էլ խիտ ծառաստան կը դառնար։ Արդեօք եկող շաբաթ օրուանից չսկսե՞նք տեղափոխութիւնը։

—Հիանալի՜ է, համաձայնեցին ընկերները։ Եւ իւրաքանչիւր ծառը մենք կանուանենք այն ջահել օրիորդի անունով, 'ի պատիւ որի ծառը կը տնկենք։

—Այո՛, մի երեսուն տարուց յետոյ, ինստիտուտի ուսանողները և ուսանողուհիները շնորհակալ կը լինին մեզանից՝ երբ մեր տնկած այգու ծառերի ստուերների տակ կը զբօսնեն, բացականչեց Հարֆիլդը։

Այդրամեան ինստիտուտի Հարֆիլդի ընկերները չափազանց յարգում էին նրան. նա նրանց աչքում առանձնապէս բարձրացաւ, երբ նրա ընտիր յատկութիւնների մէջ երևաց և նրա բնաւորութեան ամենաաչքի ընկնող կողմը, այն է՝ նա անկաշառելի արդար էր լինում նոյն իսկ ամենաչնչին բաների մէջ։ Ինքը սաստիկ սիրելով կռթօփի խաղը Ջէմսը միշտ ցաւում էր նրանց համար, ովքեր զուրկ էին լինում այդ բաւականութիւնից։ Մի անգամ երբ նա փայտը վերցնելով՝ պատրաստվում էր իրան տեղը բռնելու, նա նկատեց որ խաղացողների չորս կողմն են ժողովուել ստորին դասատան աշակերտները և նախանձով մտիկ են տալիս իրան վրայ։ Փոքրիկների աչքերում պարզ կարդացվում էր հետևեալ խընդիրքը՝ «Թոյլ տուէք մենք էլ խաղանք»։

—Մի՞թէ այս փոքրերը չպէտք է մասնակցեն մեր խաղին, հարցրեց Ջէմսը իր ընկերներներից մէկին։

—Սա էլ ի՜նչ մտածեց, բացականչեց նա. երեխաների հետ խաղա՞նք։ Նրանք մեզ միայն կը խանգարեն։

—Բայց եթէ նրանք սաստիկ ցանկանում են։ Ինչո՞ւ չթոյլ տալ . . .

—Հարկաւոր չէ։ Ո՞րտեղից նրանք կարող են այս ծանր փայտը բանացնել, շատ կարելի է վնասուեն էլ։

— Եթէ դուք նրանց չընդունէք – ես էլ չեմ խաղալ, ասաց Ջէմսը վճռողաբար և մի կողմ ձգեց ձեռքի փայտը։

— Պարոններ, թող այդպէս էլ լինի. Հարֆիլդի խաթեր համար փոքրերին էլ թոյլ տանք, ձայնեցին մի քանի ուսանողներ, որոնց ափսոսներն եկաւ որ զրկուելու են Ջէմսի պէս ճարպիկ խաղընկերից։ Թող գան մեզ հետ խառնուեն, և եթէ մեզ խանգարեն՝ այդ Ջէմսի մեղը կը լինի

—Սրբէք նրանք մեզ չեն խանգարիլ, այլ ընդհակառակը՝ նրանք խաղն աւելի կը կենդանացնեն, ընդդիմաբանեց Ջէմսը բարձրացնելով փայտը և կանչելով երեխաներին խաղացողների մէջ մտնելու, — եթէ խաղը իրան կանոնով էլ առաջ չերթայ՝ այդ մի մեծ կորուստ չէ; բայց յետոյ գիտէք որքան բաւականութիւն կը պատճառուի. չէ՞ որ խաղի բուն նպատակն էլ հէնց դրա մէջն է կայանում։

(Կը շարունակուի։)

ԹՌՉՈՒՆՆԵՐՆ Ո՞ՒՐ ԵՆ ԳՆՈՒՄ ՁՄԵՌԸ

Անշուշտ, դուք այդ հարցը շատ անգամ տուած կը լինիք ձեզ, և արդէն գիտէք էլ, թէ թռչունները տաք երկիրներ են գնում ձմեռը: Միայն՝ բացի ձեր այդ գիտեցածը, որ նրանք ինչու են գնում և էլի ինչու կրկին վերադառնում, —ձեր մտքովը չի՞ անցել արդեօք՝ որտեղ են գտնվում այդ երկիրները և թէ՝ մշտակա՞ն տաք է լինում այնտեղ: Ահա ձեր այդ հարցերին ես կը կամենայի կարողացածիս չափ պատասխան տալ:

Գարնանը, ամբողջ բնութիւնը հրճւում—ուրախանում է: Ծառերը փթթում են—ծլում, ծաղկում և թարմ ու տաք օդ արտաշնչում. թռչուններն իրանց սիրելի տաղերն են երգում և բուն շինել սկսում: Գալիս է ամառը. մեր թռչունիկներն արդէն կարողացել են իրանց ձագուկները հանել, կամ դեռ նոր են հանում, նրանց կերակրում, աւազակներից պաշտպանում, թռչել ու կերակուր ձեռք բերել սովորեցնում, իսկ ամառը կերակրի պակասութիւն չէ լինում. տարուայ այդ եղանակին բազմաթիւ տունկեր հասնում են, որոնց պտուղներով են կերակրվում թռչնիկները: Նրանց համար և՝ որոնք ուրիշ կենդանիներ են ուտում, նոյնպէս ուտելիքի պակասութիւն չկայ, որովհետև, ուր բոյսեր կան, այնտեղ արդէն անպատճառ միլիոնաւոր միջատներ կը լինին, որոնք կերակրվում են այդ բոյսերի տերևներով և պտուղներով: Շատ կարելի է, այդ միջատները ոչնչացնէին մեր բոլոր պտղատու և միւս օգտակար ծառերը, եթէ որ թռչուններն էլ իրանց կողմից դրանց չոչնչացնէին: Այդ միջատները նրանց համար կերակրի տեղ են ծառայում, ջնջելով դրանց՝ մեր բարեկամները, այսինքն թռչունները, չեն էլ իմանում, թէ ինչ-

պիսի ահագին ծառայութիւն են մատուցանում մարդերին։ Ամառն անցնում է, գալիս է աշունը։ Տունկերն այլ ևս չեն ծաղկում, վրայ են հասնում թխպոտ օրերը՝ եղանակն աւելի ցրտանում է. այս միջոցում մեծ ու փոքր գազաններն իրանց համար որջեր են շինում և ձմեռուայ պատրաստութիւն տես-նում — պաշար են հաւաքում իրանց բների մէջ, կամ առան-ձին տեղեր շինելով՝ նրանց մէջ ժողովում։ Միջատները նոյն-պէս աշխատում են աւելի լաւ կարգաւորուած լինել ձմեռ. ժամանակ՝ պաշար են հաւաքում, ձմերանոց պատրաստում և բոլորովին ծածկվում երկրի կամ ծառի կեղևի տակ։ Կարճ, ամենքն էլ հեռատեսութիւն են անում։

Ահա, այդ ժամանակ թռչունների համար բոլորովին նոր կեանք է սկսվում։ Նրանց համար ամենածանր և դժուար ժամանակն է այդ։ Որով առաջ նրանք պէտք է հայրենիքից հե-ռանան, որովհետև ուտելիքն սկսում է քչանալ և շուտով ձմեռը կը գայ։ Նրանք պէտք է շտապեն, թէ ոչ ձմեռը յանկարծ կը վրահասնի և քաղցածութիւնից կը սատկեն։ Նրանց համար ցաւ է իրանց քաղցր հայրենիքից հեռանալը։ միայն, ինչ արած, կարիքն ստիպում է։ Ուստի թռչուններն սկսում են պատրաստուել դէպի հեռաւոր ճանապարհորդու-թիւն։ Յանկարծ մէկէն բոլորը չեն գնում, այլ քիչ-քիչ. գը-նացողներն էլ ճանապարհից կրկին վերադառնում են. երևի հայրենիքի սէրն է ստիպում նրանց վերադառնալ։ Մի քանի այսպիսի տատանումներից յետոյ վերջապէս սկսվում է նրանց վերջնական չուն։

Չուն սեպտեմբեր ամսին է սկսվում, իսկ նոյեմբերին ար-դէն գնացած են լինում այն բոլոր թռչունները, որոնք մեզ մօտ չեն ձմեռում։ Գնալու և վերադառնալու ժամանակա-միջոցը երկար չէ տևում՝ փետրվարից սկսած թռչուններն արդէն հայրենիք են վերադառնում։ Ամենից առաջ նրանք են գալիս, որոնք ամենից ուշ էլ հեռացան մեզանից։

Թռչունները՝ հէնց որ հանում են իրանց ձագուկներն ու նրանց թռչել և կերակուր ճարել սովորեցնում, սկսում են իրանց պանդխտութիւնը։ Շատերն սպասում են հայրենիքում մինչև իրանց փետրափոխութիւնը, և միայն դրանից յետոյ են ճանբայ ընկնում։ Անշուշտ, հայրենիքից նրանց հալածող — տարագիր անողը միայն ուտե-

լիքի պակասութիւնը չէ, այլ կան և էլի ուրիշ շատ պատճառներ։ Այն օտար երկիրը՝ ուր նրանք գնում են ձմեռ ժամանակ՝ շքեղազարդ է, այն միջոցին, երբ մեզ մօտ ձնի հաստ խաւով ծածկուած է լինում երկիրը, այնտեղ, երկար երաշտից յետոյ, յորդառատ անձրևներ են սկսվում և ճոխ բուսականութիւնը վերանորոգւում:

Քանի մի թռչուններ կան, որոնք կենտու են ուղևորվում, բայց համարեա նրանցից շատ-շատը—երամներով։ Երբ նրանց որդիքն արդէն ամրապնդուած են լինում և էլ կարողանում են լաւ թռչել, ծնողներն իրանց որդկերանց հետ մեծ-մեծ երամներ կազմելով, չուելուց առաջ, վերջին անգամ էլ երգում են հայրենիքի անուշ հողի վրայ, իրանց սիրելի վայրերին մնաս բարով ասում և գնում։

Այդ գնացողներից ամենից առաջ ծիծեռնակներն են, որոնք՝ կարելի է ասել, բոլոր թռչողներից շատ արագ են թռչում, այնպէս որ՝ քանի մի օրում Աֆրիկա են հասնում։

Սովորաբար բոլոր թռչունները թռչում են դէպի հարաւ: Հիւսիսում եղածներից մի քանիսը ձմեռում են Եւրոպայի հարաւային երկրներում — Ֆրանսիայի հարաւային մասում Իտալիայում և այլն. բայց մեծ մասը դէպի Աֆրիկա է ուղևորվում. կան էլ, որ հասարակածից անգամ անցնում են։ Ձեզ յայտնի է, թէ բոլոր թռչունները միատեսակ լաւ չեն թռչում. ինչ համեմատութիւն արագաթռիչ ծիծեռնակի և լորամարգիի, բուի, լորի կամ ուրիշ վատ-թռչողների թռիչքի մէջ։

Առհասարակ լաւ-թռչողները ցերեկով են թռչում, հանգստանալ են սկսում միայն կէսօրից յետոյ, և լոյսը բացուելուց մի քիչ առաջ նորից շարունակում են իրանց ուղեգնացութիւնը. իսկ վատ-թռչողներն ընդհակառակը՝ գիշերը. այսպէս անելու պատճառն այն է՝ որ հեշտութիւնով կարողանան ազատուել գիշերուայ մթութեան մէջ այն գիշատիչներից, որոնք ամբողջ ճանապարհորդութեան ժամանակ չեն դադարում նրանց հալածելուց։ Բայց չնայելով այդ բանին՝ վերջիններս, այսինքն վատ-թռչողներն աւելի շատ վաղ են հասնում իրանց պանդխտութեան տեղին, որովհետև ամբողջ ցերեկուայ հանգստութեան միջոցում շատ քիչ աշխատանք է հարկաւոր լինում կերակուր ճարելու համար, մինչդեռ

գիշերը հանգստացող լաւ-թռչողների համար կերակուր ձեռք բերելը շատ դժուար է. ահա այդ հանգամանքն է, որ ուշացնում է նրանց ճանապարհին։

Թռչուններն առհասարակ մեծ գետերի և հովիտների ուղղութիւնով են գնում. իսկ լող-իմացողները ջրերի վրայով, որտեղ և ձուկ են որսում։ Մնում է այժմ, որ իմանանք թէ ինչ են անում նրանք այդ գնացած երկրներում։ Ինչպէս վերևն ասած է՝ թռչունները գլխաւորապէս Աֆրիկա են գնում։ Այստեղ նրանք ցրւում են դէպի ամեն կողմի վրայ. մի քանիսը բնակւում են Աֆրիկայի, համարեա մինչև օրս մեզ անյայտ, կենտրոնական անտառներում, բայց մեծ մասը Նեղոսի ափերին է տեղաւորւում։ Նեղոսի հովիտը, բացի այն որ չափազանց բերրի է, այլ և բազմաթիւ զանազան տեսակ տեղեր ունի. այնտեղ կան և՛ լեռներ, և՛ անտառներ, և՛ ահագին լճեր, և՛ ճահիճներ։ Նեղոսից գոյացած բազմաթիւ լճերն առատ են ձկներով։ Անձրևային ժամանակ Նեղոսը շատ վարարում է և, դուրս գալով իր ափերից՝ ծածկում է ընդարձակ տարածութիւն. և երբ ջուրն սկսում է յետ քաշուել [illegible]նուանքն՝ ցամաքի վրայ նստում է պարարտ ցեխ—որը մի տեսակ զանգւած, որի մէջ դժւժում են միլիոնաւոր տեսակ-տեսակ ճճիներ ու միջատներ։ Ահա այստեղ մեր ճահճային թռչունների օրը բացւում է։ Այդ երկրի միւս հիւրերի համարեա բան կայ։ Նեղոսի հովտում տարուայ մէջ ընդհանրապէս երկու եղանակ է տիրապետում—երաշտային և անձրևային։ Երաշտայինը համապատասխան է մեր ձմեռուան, որովհետև ինչպէս մեզանում ձմեռ ժամանակ, այնպէս էլ այնտեղ տարուայ այդ միջոցում բնութիւնը մեռած է—ամեն բան բոլորովին այրւում է արեգակի կիզիչ ճառագայթներից։ Երբ մեզանում սկսւում են տաք եղանակները՝ գարուն ու ամառ է, երբ մեզ մօտ ամեն ինչ ծաղկած դրութեան մէջ է, Եգիպտոսում երաշտութիւն է տիրում։ Եւ ընդհակառակը, երբ մեզանում սկսւում է ձմեռը, այնտեղ անձրևներ են գալիս, որից ամբողջ բնութիւնը նոր կեանք է ստանում և հողը գեղեցիկ բուսականութիւնով ծածկւում։ Եգիպտոսում շատ ախորժելի է տարուայ այդ միջոցին. ահա, թէ ինչու մեր բարեկամները դէպի այնտեղ են դիմում ձմեռ ժամանակ։ Բայց ինչքան էլ որ լաւ ու հանգիստ է լինում պանդխտու-

թեան մէջ—օտար երկրում, այնուամենայնիւ միշտ տըխուր են, իրանց քաղցր հայրենիքի վրայ մըտածելուց երբէք չեն դադարում։ Օտար երկրում եղած ժամանակ տխրութիւնից մինչև անգամ չեն երգում, այլ միայն այն ժամանակն են սկսում երգել—ուրախանալ, երբ քանի մի օր է լինում մնացած հայրենիք վերադարձին, որովհետև զգում են, թէ շուտով տեսնելու են իրանց սիրեցեալ հայրնիքը։ Ահա այդպէս քաղցրն է հայրենիքի սէրը։

Օտարութիւնից յետ են դառնում նրանք այն ժամանակ, երբ մեզանում եղանակները տաքանում են։ Ամենից առաջ երևում են առաջաւորները, որոնց երամները սովորաբար քանի մի հատից է լինում բաղկացած. սրանց մեծ մասը մահն աչքի առաջ է առնում, որովհետև քաղցր հայրենիքի սիրոյ կարօտից մղուած՝ չեն էլ կամենում մտածել, թէ կարող են հազար մի տեսակ արգելքների ու նեղութիւնների հանդիպել։ Ի՞նչ հոգերն է ցուրտը, քաղցը, քանի որ կըրկին տեսնելու են իրանց սիրեցեալ հայրենիքը։ Առաջաւորներից մի քիչ ժամանակ անցնելուց յետոյ՝ գալիս են և գլխաւոր երամները։

Հայրենիք վերադառնալիս նրանց թռիչքը շատ արագ է լինում։ Նրանք այնպէս շտապում են իրանց ծանօթ սիրելի վայրերը տեսնելու, որ շատ անգամ, արագ թռչելուց, հայրենիքից շատ դէնը—դէպի հիւսիս են թռել, ապա նորից վերադարձել։ Երբ հայրենիք են գալիս, նրանք հաստատւում են այն տեղերում, որտեղ անցեալ տարի բնակւում էին, և շատ անգամ էլ միևնոյն իրանց բներում։ Ասածիս ապացոյց են հետևեալ երկու օրինակը։

Մարդու մէկն այնպէս ընտելացրած է լինում մի ծիծեռնակի, որ նրա ուսերի վրայ նստելիս է եղել, նրա սենեակը ներսթռել։ Ձմեռը թողել գնացել է, իսկ գարնանը կրկին վերադարձել նրա մօտ։ Մի անգամ, անջատումից յետոյ, հայրենիք վերադարձած միջոցին ծիծեռնակը ճանապարհին պատահում է այն մարդուն և, ճանաչելով նրան՝ իսկոյն նստում է նրա ուսի վրայ։ Երեք տարի շարունակ այդ ծիծեռնակն իր բարեկամի մօտ է վերադարձել, բայց չորրորդում էլ չի եկել,

որ շատ հաւանական է թէ՝ նա մի գիշատիչի ճանկն ընկած լինի։

Ահա և միւս օրինակը. մի հիւրանոցատէր սարեկներից ընից երկու ճուտ վերցնելով՝ երկուսին էլ մեծացնում է. երբ թեւականին շահանում են, նա մինին ազատ է թողնում, բայց այդ ազատուածը հեռանալիս չի լինում վանդակում բանտարկուած ընկերոջից և միշտ էլ գալիս է նրա մօտ։ Աշնանն ուրիշների պէս նա էլ է հեռանում հայրենիքից և գնում օտարութեան մէջ պանդխտելու, բայց գարնանը նորից վերադառնում է հայրենիքում բնակուող ընկերոջ մօտ։ Եւ այս շարունակւում 5 տարի. իսկ վեցերորդում, նա այլէն էլ չէ վերադառնում․ ․ ․

Վերը պատմած երկու օրինակներից պարզ երեւում է թէ՝ թռչունները ոչ միայն ճանաչում են քաղցր հայրենիքում եղած իրանց ծանօթ սիրելի վայրերը, այլ նրանք և գիտեն բարեկամական քնքուշ կապեր հաստատել նրանց հետ, որոնք իրանց անկեղծօրէն սիրում են ու փայփայում։

Փոխադր. Լ. Մ—Ա.



ՉԱՐԱՃՃԻ ՊԻՊԻԻ ԱՐԱՐՄՈՒՆՔԸ

ա, դուք էք իմ սիրոն; Պիպին է—գեղեցիկ կերպով սանրուած, որի մետաքսանման սպիտակ մազերը փրփրում են և դուրալի էլ փայլում . . . Գիտէք սա ով է—Թափառական Հասկուլի թոռն է . . .

Ես գիտեմ որ իմ վաղեմի ծանօթ Պիպիս՝ ձեզ հաճոյանալու մտքով՝ ուրախ է իր մասին տեղեկութիւն տալուս... Ի՞նչ արած, Հաճոյանալը—ուղիղն ասեմ՝ սրա փ ո ք ր ի կ թուլութիւններից մինն է. բայց ո՞վ չունի թուլութիւն. Հետևապէս շներն էլ ունին . . .

Այս մեր Պիպիի մասին, հէնց իր ներկայութիւնով, քանի մի մանրամասութիւններ եմ ուզում պատմել. միայն թէ՝ «բարեկամութիւնը լինի իր տեղը, ճշմարտութիւնն էլ իրան» . . .

Պիպին—փափկասէր է. սա իր համար լաւ ապրում է մի մեծ և շքեղ տան մէջ, փափուկ գորգերի վրայ թաւալվում, գահաւորակների վրայ թռչկոտում, ուտում է ամենահամեղ կերակուրներ, առաւօտ իրիկուն քցովի թէյ խմում, քնում է զունաւոր բարձերի վրայ, ունի աշունքուայ և ձմեռուայ մի քանի ձեռք հիանալի տաք հագնելիք—կարմիր, կապոյտ... Ունի նոյնպէս դրսի համար առանձին աղուէսի մորթուց մուշտակ։ Պիպին ափ-

սէի մէջ է կերակրվում՝ նազիկ կուրծքը խիստ խնամքով ծածկած նախշուն գոգնոցով... Կարօտութիւն, վատ եղանակ կամ թափառական աղքատ շների հոգսեր ի՞նչ բան է, նա հասկացողութիւն չունի դրանց մասին... Նրա զիլ ձայնը այնպէս ախորժելի է հնչում, ինչպէս արծաթեայ փոքրիկ զանգակ . . .

Պիպին գիտէ տան մէջ ամենքին հաճելի լինել. նա փոքրիկ Սափօի հետ վազվզում է՝ ամենածաղրալէ կերպով գլորուելով նրա ոտերի առաջ։ Հէնց որ Սափօն սկսում է տիկնի հետ խաղալ՝ Պիպին էլ ամենասիրալիր կերպով մօտենում է իր փոքրիկ տիրուհուն և պլպլըզում ու առաջին թաթերով գրկում նրա սիրական տիկին Լիլիին, և այն սատիճան սիրուն կերպով գլուխը խոնարհեցնում է Լիլիի գունատ ականջին, որ կարծես թէ մի ծածուկ բան է փսփսում նրա հետ։

—Մայրիկ, մայրի՛կ, նայի՛ր, ի՜նչ խելօքն է եղել Պիպին. ի՜նչպէս նա լուրջ կերպով զրոյց է անում Լիլիս հետ, ամեն անգամ Պիպի այդ արարմունքից հիացած գոչում էր Սափօն ծափ տալով։

Իսկ Պիպին՝ որպէս թէ հասկանում է աղջկայ ասածները՝ անմիջապէս տիկնին մի կողմն է նստեցնում և ծարս-կանգնած կամաց-կամաց առաջ գալիս դէպի Սափօն և՝ իբրև պատահմամբ, երբ երեխան խոնարհում է դէպի իր սիրական Լիլին՝ իսկոյն ամենայն քնքշութիւնով սկսում է լիզել նրա փոքրիկ ձեռքը, ուրախ կաղկանձում և ամենայն մտերմութիւնով մօտեցնում իր պստլիկ դունչը... Փուչ-կենդանին գիտէ որ այդպիսի արարմունքով կարող է քաղցրաւենիք ստանալ։

Պիպիի վրայ Սափօի եղբայր Աբգարն էլ է հիացած. երբ նա դասերը պատրաստելիս է լինում չարաճճի Պիպին իսկոյն զգուշութիւնով մանկանոցն է մտնում, աննկատելի կերպով աթոռի վրայ բարձրանում, յետոյ սեղանի և, թեքուելով դէպի այնտեղ դրուած գիրքը՝ ըս-

կսում է ամենայն ուշադրութիւնով զննել գրքի իւրաքանչիւր տողը, յետոյ բարձրացնելով գլուխը՝ իր նայուածքը կենդրոնացնում է մի կէտի վրայ, որպէս թէ խիստ խորը կերպով մի ինչ որ բան է մտածում... Խօսում են, իբր թէ սա մինչև անգամ գրիչ է վերցրել և մի քանի՝ յայտնի բան է միայն իրան հասկանալի գծեր ճզմզել և իր սպիտակ թղթիկն էլ մի լաւ թանաքոտել. ինչ էլ որ լինի սա դրանով ցոյց է տուել Աբգարին՝ թէ ինքը հասարակ շներից չէ, այլ կարող է խաղի ժամանակ խաղալ, գործի ժամանակն էլ՝ գործ շինել...

Պիպին՝ ըստ իրան հասկացածի՝ յարգանքով է վարվում դէպի իր տէրերը. գիտէ թէ երբ կարելի է կատակ անել, երբ չէ. ծեր-մարդերի ու պառաւ-կնիկների առաջ կամակատար է. եթէ թաշկինակ կամ խաղաթուղթ է տեսնում վայր ընկած՝ անմիջապէս վերցնում և ամեն մինը իր տիրոջն է յանձնում։ Մանուկների հետ եղած միջոցին խաղացող է, ուրախ է, ծիծաղեցնում է նրանց՝ միշտ էլ նոր-նոր հնարներ մտածելով։ Մէկ խօսքով՝ տանըցիք բոլորն էլ հիացած են Պիպիի վրայ։ Թէև նա ուր ասես կապած գդալի պէս մէջ է ընկնում, բայց միանգամից չի մտնում սենեակ, այլ նախ և յառաջ շեմքից սկսում է սենեակի մէջ եղողներին աչքի անցնել. եթէ չկանչեն՝ նա մի քայլ անգամ առաջ չի շարժուի իր կացած տեղից, բայց հէնց որ ականջին է հասնում իր «Պիպի, Պիպի» անունը թէ չէ, իսկոյն մէկ ակնթարթում ներս է վազում և պուպուզ—կանչողի կողքի կանգնում...

Պիպին խելքի բուն է, հոգի է, կամակատար է. մէկ խօսքով՝ սա մի հանճարեղ շուն է։ Մէկ էլ տեսնում ես ամեն կողմից լսվում է՝ «Պիպի, ահա քեզ ընկոյզ, անուշարա. Պիպի, ահա քեզ կոնֆէտ». այսօր Պիպիին արգանակ տուած է, թէ չէ. ինչ կը լինի որ

Պիպին էլ մի քիչ կարկանդակ տաք, ախար հօ հասարակ շուն չէ, նա իր բերանի համը գիտէ—ճաշակով շուն է» և այլն, և այլն. և Պիպին էլ չկամենալով ոչ մէկի խաթերն էլ է գիպչել՝ ով ինչ առաջարկում է՝ուտում է։

Այսպէս՝ Պիպի բանը,իր յաջողակութեան շնորհով, միշտ յաջող էր գնում։ Բայց յայտնի է որ նոյն իսկ ամենաերևելի յաջողակները ևս անյաջողութիւնների են հանդիպում. Մի անյաջող օր լուսացաւ, որնոր անյաջող եղաւ և մեր աման-լպստող Պիպի համար։ Նա այդ օրը սովորականից ուշ զարթեց, ճլըմկոտաց փափուկ բարձերի վրայ՝ առանց տեղից շարժուելու. քնաթաթաղ դունչը ցիցարաւ, փոխանակ տեղից վերկենալու, չնայելով որ արևն արդէն բաւական բարձրացել էր։ Մանկանոցում ոչոք չկար, սենեակի տաք օդը ներշնչելով բացականչում է մեր Պիպին. «Օ՜հ, ինչ հիանալի կարկանդակի հոտ է բուրում»։ Եւ սուտ չէ ասում. այո, Սափօն և Աբգարը իրանց սիրական Պիպին չէին մոռացել... Դանդաղ վայր է սողում բարձերից և իսկոյն մօտենում իր ծանօթ ափսէին, որի վրայ դրած է՝ կէս ձու, կարկանդակ և... բայց որմէկի անունը տալ, ափսէի մէջ այնքան բան էին դրել որ... Առաւօտներն առհասարակ մարդուս ախորժակը բաց է լինում. մեր Պիպին էլ պակաս չէր. Նա սկսում է ամէն ինչ մէկը միւսի ետևից մաքրագործել—շատ լաւ իմանալով՝ որ ստամոքսի խոհանոցում վերջն էլի իրար են խառնուելու։ Պիպի փորը կշտացաւ՝ քէֆը տեղն եկաւ—սկսում է թռչկոտել, վազվզել և ինքնաբաւական կերպով հաչել. միմիայն մէկ բան է պակաս,—մէկը չկայ, որի հետ մի քիչ խաղայ՝ թաթիկները և մարմինը մարզ է։ Բայց սպասիր, Աբգարի սեղանի վրայի գրքի մօտինը այն ինչ է, սպիտակ ճագար է. վա՜յ, կարծես կենդանի լինի... Այո, կենդանի է, կենդանի... (Երէկ գիշերով շատ ուշ Սափօի պառաւ

տատն էր բերել ճագարի այդ լքցրած մորթին և տիկ-նի փոխարէն ընծայել Սափօին, որը Պիպիի քնած ժա-մանակ զգուշութիւնով ներս էր մտել և եղբօր սեղանի վրայ դրել խաղալիկը։ Սափօն ճագարի վրայ շատ ուրախ էր—շոյում էր նրա մազերը, փայփայում, հազար մի ա-նամենաքնքուշ անուններ տալիս նրան...) Պիպին ճագա-րի վրայ խելքահան եղած՝ շատ նայելուց յոգնեց, բայց իր պսպղուն աչքերը չէ հեռացնում ճագարից, աչքերը ճպճպեցնելով աչքով է անում նրան և իր մօտ կան-չում. «Ներքև թուիր, ճագար, թուիր արի միասին ու-րախ խաղանք յատակի վրայ։ Տես, ինչպէս փայլում է նախշուն յատակը»... Բայց ճագարն անշարժ կեցած է, ոչ աչքով է անում, ոչ էլ Պիպիի ասածներին պատասխա-նում... Պիպիի համբերութիւնը հատաւ, էլ չկարողացաւ սպասել՝ ցատկեց աթոռի վրայ, այնտեղից էլ սեղանի և, դու ես իմ պարոն, հրեց ձգեց ճագարին յատակի վը-րայ, յետոյ ինքն ևս վայր ցատկելով՝ պառկեց ճագարի առաջ և սկսեց կաղկանձել,—քծնիլ, բայց չէ, ճագարն էլի առաջուան պէս անխօսուր տախտակի վրայ անշարժ հանգիստ նստած է —ձայնծպտուն չի հանում. Պիպին բարկութիւնից իրան ուտում է, մէկէն վեր է ցատկում և այն անպիտան տախտակի չուանից քաշում։ Սաստիկ թափից անիւներն սկսում են շուտ-շուտ գլորուիլ, Պի-պին առաջ է վազում իր ցեղին յատուկ թեթևաշար-ժութիւնով և հիացումով... Ճագարը հա՛ գլորվում է ու գլորվում... Առաջ չէր շարժվում, հիմա էլ չի ուզում կանգնել։ Պիպին՝ կամենալով նրան ոտնանել՝ վրայ է ընկնում և ճագարի բաշից իր սուր ատամներով բռնում, բայց այնպէս ամուր սխմում, որ մորթին պատառվում է, ճագարին տախտակի վրայ ամրացնող զսպանակը դուս պրծնում և ինչ բաներով որ մորթու փորոտիքը ցքցրած էր, բոլորն էլ դուրս թափվում փոշու նման։ Զսպանա-

կը դուսընկնելուց Պիպլիի վերին շուրթը վերաւորեց, ու թաթիկը չանգռեց ու և սկսեց վէրքից կարմիր արիւն հոսել, բայց մեր չարաճճին ամենևին ցաւ չէ զըգում, նա շուարուած և ամօթալի տարակուսութեան մէջ նստում է անիւաւոր տախտակի վրայ, ուր առաջ ճագարն էր, և որի հետքն անգամ այժմս չէ էլ երեւում։ Պիպլին իր աչքերին չէ հաւատում, ինչքան իր պըստիկ խելքին զօռ է տալիս, չէ կարողանում իմանալ թէ՝ ախար այս ի՞նչ հրաշք է՝ որ առաջ ճագար կար, իսկ այժմս չկայ։

—Ի՞նչ էք կարծում, Պիպլին՝ իր այս բոլոր արարմունքից յետոյ՝ պարզերես կը դուրսգայ, թէ ոչ։—Ի հարկէ. բաս էլ ի՞նչ Պիպլի է…



Թափառական հասկուլները և ընտանիքներում բախտից փայփայուած Պիպլիները ճիշտ է մի և նոյն ցեղից և մի և նոյն ազգից են, բայց որովհետև հեռուից են ճանաչում միմեանց՝ այդ պատճառով այնպէս են ցոյց տալիս իբր թէ իրար հետ ամենևին ծանօթութիւն չունին, և իւրաքանչիւրն իրան հասկացածով իր նպատակին է դիմում։…

Ն. ՆԵՍՄԵԼՕՎ

Թարգ. Լ. ՄԵԼԻՔ—ԱԴԱՄԵԱՆՑ։

ՀԵՏԱՔՐՔԻՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Լուսանկարչութիւն կենդանի մարդու մարմնի վրայ։ Ահա նոր գիւտ։ Ինչպէս յայտնի է լուսանկարչական պատկերները յաջողվում են բոլոր առարկաների վրայ. պատկերները զետեղում են ափսէների, բաժակների և ուրիշ շատ բաների վրայ։ Այժմ փորձեր են արած անջնջելի լուսանկարներ շինել մարդու մարմնի վրայ, որոնցից այն եզրակացութեան են հասել, որ մարդու մարմնի կաշին մինչև անգամ աւելի յարմար է լուսանկարչական պատկերների համար քան թէ թուղթը։

Ճանճերի լեզուն։ Անգլիական գիտնականներից մէկը նոր գիւտ արեց. նրա ասելով, ճանճերը հաղորդակցում են իրար հետ մի այնպիսի լեզուով, որ մարդու ականջը չի կարող լսել։ Այդ ձայնը ոչ թէ նրանց թևերի բզզալն է, այլ բոլորովին մի ուրիշ ձայն է։ Այդ գիւտը արած է միկրոֆոնի օգնութեամբ, որը, ինչպէս յայտնի է, ամենաթոյլ ձայնը զօրեղացնում է և լսելի է դարձնում։

Ճանճի լեզուն լսելու համար հարկաւոր է անշուշտ նրան նստացնել մեքենայի տախտակի վրայ. այն ժամանակ կը լսուի մի այնպիսի ձայն, որ նման կը լինի հեռու տեղից հաջող շան կամ ձիու վրնջիւնին։

Ջրի և ցամաքի վրայ շարժուող կառք։ Ամերիկացի Ֆրայէրը մի քանի տարի շարունակ աշխատում էր հնարել այդ տեսակ գործիք, վերջապէս նա հասաւ իր նպատակին։ Նրա պատրաստած կառքի օրինակը քաշում է 100 փութ և շարժւում է շոգիով. միայն սովորական անիւների փոխանակ լիսեռի վրայ անց է կացրած երեք դատարկ գնտակներ այնպիսի մեծութիւնով, որ նրանք ազատ կարողանում են պահել գործիքը ջրի երեսին։ Նստած իր տարօրինակ կառքի մէջ հնարողը նախ անցկացաւ Նիւ-Եօրկի փողոցներով, իսկ յետոյ իջաւ գետը, որտեղ շարունակում էր գլօսնել ջրի մակերևոյթի վրայ։

Ամենամեծ գետերը։ Ըստ նորագոյն աշխարհագրական քարտէսի Դանիէլի. Միսիսիպի գետը Միսուրիի հետ, նոյնպէս և Միդիգօն վտակով կազմում է 7275 քիլոմետր (քիլոմետրը մօտ մի վերստ է), Նեղոսը – 6450, Ամազօն գետը Մատէյրայի հետ—6420, Եանցեկեանը—5350, Ենիսէյ և Ամուր՝ իւրաքանչիւրը—470, Գօան-Գօն – 4440, Օբը Իրտիշայի հետ—4350, Քամբօջան—4200, Լէնան—4100, Լա-Պլատան իր ճիւղով—3700, Վօլգան -3688, Կօնգօն – 3600, Սուրբ Լաւրէնտիոսը—3550, Նիգէրը նոյնպէս 3550, Մակէնզէն—2300, Զամբէզէն-3150-Բրախմապուտրան-2950, Ինդոսը—2900, Եփրատը-2900, Դունայը—2888, Րէնոսը—1275, Էլբան—1165, Վիսլան 1050 և Օդէր 1005 քիլոմէտր։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՍԷՐԸ

Փարիզից գրում են դեկտեմբերի 3-ին. «Արէկ Հիէի հասարակութիւնը ականատես էր մի սրտաշարժ տեսարանի։

Երկու մանուկ եղբայր և քոյր դրսում խաղում էին, երբ յանկարծ փոքրիկ չորս տարեկան Ալբերտինան ընկաւ ջրհորը, որի բերանը միմիայն տերևներով էր ծածկուած։ Փոքրիկ Ժիւլը, տեսնելով դժբախտութիւնը ձայն տուեց մօրը. «Մայրիկ, շուտով հասիր, Ալբերտինան ջրհորն ընկաւ»։ Խեղճ մայրը զարհուրած վազեց դժբախտութեան տեղը և երբ լսեց թշուառ աղջկայ աղաղակները, ուշաթափուեց, և հասկանալի է որ չկարողացաւ ոչ մի օգնութիւն հասցնել։ Այնու ամենայնիւ փոքրիկ Ժիւլը ինքն իրան չկորցրեց և ասաց մօրը. «Ինձ ցած իջեցրու, ես դուրս կը հանեմ Ալբերտինային»։ Մայրը առաջ յապաղում էր, բայց որովհետև ուրիշ միջոց չկար, նա իւր փոքրիկ որդուն իջեցրեց ջրհորի մէջ։ Ժիւլը ձեռքն առաւ քրոջը և աղաղակեց. «Այժմ մեզ դուրս քաշիր»։ Մայրը հնազանդուեց, բայց յանկարծ նա նորից ուշաթափ եղաւ, թէև ձեռքից բաց չթողեց թոկը։ Ժիւլը դարձեալ աղաղակեց. «Թոկը պնդացրու, մնացածը ես ինքս կանեմ»։ Մայրը մեքենայաբար կատարեց այս պահանջը։ Այն ժամանակ Ժիւլը Ալբերտինային նստացրեց ջրհանի մէջ, ինքը թոկի վրայով վեր ելաւ՝ քրոջն էլ դուրս հանեց։

Այսպէս՝ փոքրիկ ութ տարեկան Ժիւլը ազատեց մահից իր չորս տարեկան Ալբերտինա քրոջը։

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ՀԻՆԳ ՄԱՏՆԵՐ

Ճկոյթ մատը, որ սոված մարդու օրինակ է, ասաց միւս մատներին.

—Ընկերներ, մենք բոլորս էլ սոված ենք, մանաւանդ ես, որ ամենիցդ էլ կարի նուազն եմ, եկէք, *գնանք հաց ուտելու*։

Իսկ նորա հարեւան մատը, որ անյոյս մարդու տիպարն է ներկայացնում, հարցրեց. «*Հաց որտեղից ուտենք*»։

—*Աստուած կը տայ*, վրա բերեց միջամատը, որը հաստատայոյս, առաքինի մարդու պատկերն է, և որը վարձատրուած է բնութիւնից բարձր հասակով գլխել բոլոր մատների վրայ։

Բայց ցուցամատը, որ երկմիտ մարդու սիրտ ունէր, հարցրեց երկչոտ ձայնով. «*Որ Աստուած չտուեց*»։

—*Կերթանք գողութիւն կանենք*, գոռաց կոպիտ բոյթը։

Աստուած բարկացաւ նրա վրայ, խփեց նրա գլխին և նա իր ընկեր մատների շարքից ճեղքուեց դէպի ցած և այն օրից մինչև հիմա ծառայութիւն և օգնութիւն է անում միւս մատներին։

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՑԵԱՆՑ

ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ

31) Առաջ. Թովզեցի

Պապը ծմակումը, ատները կրակումը։

32) Առաջ. Նոյնը

Երկաթէ մեռել, փէտէ գերեզման։

33) Առաջ. Անիւ

Ժամանակով կը ցանուեմ,
Ժամանակով կը հասնեմ,
Ինքս երբէք չեմ քաղցում,
Իսկ մարդկանց միշտ կերակրում։

34) Առաջ. Կ. Մարտիրոսեանց

Եթէ իմ գիտցած խօսքի
Առաջի մի վանկը կարդաք,
Հայաստանի Տարօն գաւառի
Դուք մի աւան կը ստանաք։
Իսկ եթէ երկրորդը կարդաք,
Կերակրի մէջ շատ կը տեսնէք.
Ամբողջը դուք կարդալիս
Մարդու անուն կը ստանաք։

35) Առաջ Կ. Տէր-Աստուածատրեանց

Երկւորեակ ենք մէկ տեղ ծնած,
Իրար նման՝ մէջքից կպած,
Ոտներ չունենք՝ պառկած ենք,
Երկու աչքը հանած ենք,
Հեռանում ենք, մօտենում ենք,
Ատամ չունենք՝ բռնում ենք,
Ծուռ բաները դրստում ենք։

36) Առաջ. Ղ. Տէր-Մկրտչեան

Այս աղիւսակի մէջ տեղաւորել հետեւեալ տառերը. 2 ա, 2 ի, 2 մ, 2 ր, 1 ն և 1 հ, այնպէս որ, ձախից դէպի աջ և վերէն վար կարդալով, ստացուին միևնոյն բառերը։

Շ Ո Ւ Տ Ա Ս Ե Լ Ո Ւ Կ

Կամայ կամ ակամայ։

ՎԱՆԵՑՈՑ ԵՐԳ



(Խօսքերը հետևեալ համարում)

ԱՂԲԻՒՐԻ № 10-ի ՄԷՋ ԵՂԱԾ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՐԵԲՈՒՍԻ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆԸ. 29) *Ծառ:* 20) *խա—խաղ—աղ—ող=խաղող: Րեբուս—Սար—դը—ոստայն—ովէ—Ճանճ—որսում:*

Խմբագիր-Հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ:

Дозволено цензурою. Тифлисъ. 29 Ноября 1883 г.
Типографія И. Мартиросіанца, на Орб. ул., д. № 5

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲՈՒՐԱՍ· ՄԱՆԿԱՆՑ

Պատկերազարդ հրատարակութիւն ամիսը երկու անգամ, տարեկան գինը 4 ր. Հրատարակվում է Պօլսում. ստորագրուել կարելի է «Վարժարան» ամսագրի խմբագրատանը։

ՄՇԱԿ

Գրականական քաղաքական լրագիր տարեկան գինը 10 ր. կէս տարուանը 6 ր. խմբ.-հրատ. Գ. Արծրունի. հասցէն՝ Тифлисъ, Редакція „Мшакъ"

ԱՐՁԱԳԱՆՔ

Քաղաքական գրականական շաբաթաթերթ. տարեկան գինը 7 ր. համարները 10 կոպ. հասցէն՝ Тифлисъ, Ред. „Ардзаганкъ" Խմբ.-հրատ Ա. Յովհաննիսեան

ՄԵՂՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Գրականական ազգային լրագիր տարեկան գինը 10 ր. կէս տարին 6ր. Խմբ. Պ Սիմէօնեանց. հասցէն՝ Тифгисъ. Редакція „Мегу Айастани"

ՊՍԱԿ

Քաղաքական գրականական լրագիր. տարեկան գինը 4 ր. խմբ. հրատ. Վ. Շաղաջանեանց. հասցէն՝ Эривань. Ред. „Псакъ"

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԹԵՐԹ

Միամսեայ հրատարակութիւն տարեկան գինը 3 ր. Խմբ. հրատ. բժ. Լ. Տիգրանեանց. հասցէն՝ Эривань. Ред. журн. „Гигіеническій Листокъ"

ՄԱՆԿԱԿԱՆ ԸՆԹԵՐՑ.-ԳՐԱԴԱՐԱՆ

(Սերգիեւսկի փ. պ. Մելիքօսեանների տուն) բաց է ամէն օր առ. 10—5 ժամը երեկ. գրադարանը լիքն է և պարբերաբար ստանում է հայերէն, ռուսերէն, գաղիերէն, գերմաներէն մանկական ընտիր գրքեր և օրագրեր։ Բաժանորդագրութիւնը մատչելի է, չքաւորները կարող են ձրի օգուտ քաղել։

—

ԵՐԵՒԱՆԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հրատարակվում է շաբաթը երեք անգամ. տարեկան գինը 1 ր. խմբ.-հրատ. Եմ. Տէր-Գրիգորեանց հասցէն՝ Эривань Типографія Теръ-Григорянцъ.

СЕМЬЯ И ШКОЛА

Иллюстр. отд. для дѣт. 12 №№ 8 р.
Учебн.—воспит. отд. . . . 5 р.
(Полн. журн. 22 №№). . . 12 р.
Петербургъ. Больш. Сад. пр. Гостин. дв. д. № 12.

ИГРУШЕЧКА

Иллюстр. еженедѣльн. жур. для дѣтей год. цѣн. съ пересыл. 6 р. Ред.-изд. **Т. Пассекъ.** Петербургъ. Мал.-Подьяческ. д. 4 кв. 16.

РОДНИКЪ

Дѣтск. иллюстр. ежемѣсячн. журн. год. цѣн. съ пересылк. 5 р., съ приложен. сборн. „Воспит. и Обуч." . . . . 6 р.
Ред.- изд. **Е. Сысоева**
С. П. б. Спасская у. д. № 1

MON JOURNAL

récuelle mensuel pour les enfants de cinq a dix ans. Pris de l'abonnemant dun an 2 fr 25. Paris Hachette et C-ie. èditeurs 79 Boulevard Saint Gérmain.

ԲԱՑՈՒԱԾ Է ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻ 1884 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ:

„ԱՂԲԻՒՐ“

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՄԻԱՄՍԵԱՅ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՏՂԱՅՆԵՐԻ ԵՒ ԴԱՍՏԻԱՐԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ:

(ՏԱՐԷՆԸ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԻ 12 ՀԱՄԱՐ 2—3 ՏՊԱԳՐԱԿԱՆ ԹԵՐԹ)

Կը հրատարակուի միևնոյն գիրքով միևնոյն ուղղութեամբ և նոյն աշխատակիցների մասնակցութեամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

I) Վէպեր, մանրավէպեր, զրոյցներ, առակներ, հէքիաթ-ներ, ճանապարհորդութիւններ, կենսագրութիւններ:

II) Բանաստեղծութիւններ:

III) Գիտութիւն և արուեստ:

IV) Հետաքրքիր տեղեկութիւններ:

V) Այլ և այլք:

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

VI) Մանկական, ֆրեբելեան, շախմատի և այլ խաղեր, ռէբուսներ, թուաբանական խնդիրներ: Անեկդոտներ, հանելուկներ, շուտասելուկներ:

VII) Երգեր նոտաներով:

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

VIII) Կրթութեան և դաստիարակութեան վերաբերեալ յօդուածներ և տեղեկութիւններ:

IX) Առաջարկութիւններ, խորհուրդներ:

X) Մատենախօսութիւն և նոր գրքեր:

XI) Խառն լուրեր:

Պատասխաններ: Յայտարարութիւններ:

Երկրորդ բաժինը կը հրատարակուի առանձին թերթերով տարինը չորս անգամ:

Տարեկան բաժանորդները կը ստանան երկու պրեմիա, յուլիսին և դեկտեմբերին:

«ԱՂԲԻՒՐԻ» տարեկան բաժանորդագինը **3** րուբլի է, կէս տարուանը՝ **2** րուբլի:

Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Агпюръ“ իսկ արտասահմանից՝ Tfiiis (Caucase) Rédaction du jurnal. «AGBUR.»

«ԱՂԲԻՒՐԻՆ» Թիֆլիսում կարելի է ստորագրուել և հայ գրավաճառանոցներում, պ. Շահվերդեանի պավիլիօնում ու Մանկական գրադարանում, իսկ Պօլսում «Բուրաստան Մանկանց» հանդիսի խմբագրատանը: Խմբագիր հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆՑ: